№ 219 ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5 — 1905 — ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5 № 219

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

Կատարինէ, Առաքել և Արմենուհի Բաբախանեանները սրտի ցաւով յայտնում են ազգականներին և բարեկամներին՝ առաջինը իր սկեսուր, երկրորդը իր մայր և երրորդը իր տատ

Եղիսաբեթ Բաբախանեանի

մահը, որ տեղի ունեցաւ երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ, նոյեմբերի 2-ին։ Յուղարկաւորութիւնը շաբաթ օր, նոյեմբերի 5-ին, առաւօտեան ժամի 10-ին, հանգուցեալի բնակարանից, Սօլոմոնովսկայա փողոց տուն № 14, դէպի Զգրաշէնի Աւետեաց եկեղեցին, իսկ այնտեղից՝ Խօջիվանքի գերեզմանատունը։

Հոգեհանգիստը ուրբաթ օր, նոյեմբերի 4-ին, երեկոյեան ժամի 5-ին։ 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Չէ նպաստում, այլ արգելում է. Վերջին տեղեկութիւններ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մաքեր և փաստեր. Բագուի սև օրերից. Ասպատակութիւնը Զանգեզուրում. Գաւառապետ Զերքեզովի զեկուցման առիթով. Թատրոն և երաժշտութիւն. Բանուորական շարժումը Խարկովում. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Պարսկական մամուլ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՉԷ ՆՊԱՍՏՈՒՄ ԱՅԼ ԱՐԳԵԼՈՒՄ Է

Այն անձերը, որոնք ամեն մի երևոյթի մէջ որոնում են տնտեսական ազդեցութիւնների հետքեր, անշուշտ ցանկանում են որոշ հիմունքներ գտնել և հայ-թուրքական յարաբերութիւնների այն սուր արտայայտութիւնների մէջ, որոնք այնքան տխուր և ծանր օրեր են ստեղծել մեր երկրում։

Սակայն մինչև այժմ մենք չենք լսել լուրջ առարկութիւններ այն տնտեսական հանգամանքների մասին, որոնք իբր թէ զայրացրել են թուրք ամբոխը հայ մասսայի դէմ։ Մենք կը սպասենք դարձեալ և դարձեալ, մինչև որ կը տան մեր ձեռքը պատճառաբանված դատողութիւններ և փաստական ուսումնասիրութիւններ։

Իսկ մենք տեսնում ենք իրականութեան մէջ մի այսպիսի երևոյթ։ Հայ-թուրքական ընդհարումների ընդարձակ ծաւալ և զարգացում ստանալուն մի քանի տեղ արգելք են հանդիսանում տնտեսական հանգամանքներ։

Արգելք, այլ ոչ նպաստող և դրդող գործիքներ։

Դա կարևոր երևոյթ է։

Իբրև օրինակ վերցնենք այն շրջանները, ուր ներկայումս հայ-թուրքական յարաբերութիւնները դեռ լարված դրութեան մէջ են—Գանձակի նահանգը։ Այդտեղ մենք ի միջի այլոց նկատում ենք, որ թուրքերը սկսել են անհանգստանալ, թէ մի դուցէ հայ-թուրքական յարաբերութիւնների վատանալու պատճառով առաջիկայ գարնանը նրանք մեծ խոչընդոտների և դժուարութիւնների հանդիպեն սարեր բարձրանալու ժամանակ, դէպի ամարանոցներ տեղափոխվելու միջոցներին։

Ամարանոց գնալը պահանջ է տափարակում ապրող թուրքերի համար։ Դուցէ ժամանակով այդ պահանջը թուլանայ, դուցէ ապագայում, երբ տափարակի թուրքերը աւելի յարմար տներ և աւելի կատարեալ տնտեսութիւն ունենան, ձեռք վերցնեն սար գնալուց. բայց ներկայումս նրանք դեռ գնում են և դէպի լեռնային ամարանոցները գնալու համար պէտք է անցնեն մի շարք հայ գիւղական հողերի միջով։

Եւ արդէն այժմեանից տափարակի թուրքերը սկսել են երկիւղների մէջ ընկնել ապագայի վերաբերութեամբ և սկսել են յետ մտածել և անիծել այն խռովարարներին, որոնք սերմանել են թշնամութիւն երկու վաղեմի հարևանների մէջ և զինել մէկ ազգութիւն միւսի դէմ։

Եթէ սար գնալը չը լինէր, թուրքերը աւելի ևս ազատութիւն կը տային իրանց գաղանային և վայրագ հակումներին։ Եւ այժմ ևս սկսել են փոշմանել ու զղջալ, որ այս վերջին ամիսներում նրանք թոյլ են տուել մի շարք արարքներ, որոնցով թշնամացրել են հայերին իրանց դէմ։

Այստեղ գաղանային կրքերի զարգացմանը արգելք և խոչընդոտ են հանդիսանում տնտեսական հանգամանքները, որոնք և զսպող դեր են կատարում։

Կան և ուրիշ օրինակներ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մենք չենք կարող արտայայտութիւն չը տալ մի բողոքի, որ մի քանի ժամանակից ի վեր լսվում է Գանձակի նահանգի զանազան մասերից։

Մեզ գրում են, իսկ եկողները մեզ պատմում են, որ նրանք ականատես են մի անարժան խաղի, որ տեղի ունի այդ չարաբաղդ գաւառում։ Գեներալ-նահանգապետ Տակայշվիլին ստանում է հայերից շնորհակալութեան ուղերձներ և գովասանքի վկայականներ այն ժամանակ, երբ նա սիստեմատիքաբար հալածում է հայերին, նրանց բանտարկում, նրանց գիւղերը էկզեկուցիաների ենթարկում։

Դժգոհ և չափազանց դժգոհ ժողովրդի ներկայացուցիչները գովասանական ուղերձներ են տալիս։ Այդտեղ կատարվում է օտարոտի և անարժան խաղ, որի ընտրությունը անշուշտ կը պարզվի շուտով, բայց մի բան շատ ծանր է, որ հայերի այն արդար բողոքներին և գանգատներին, որոնք հասնում են Թիֆլիսի ատեաններին, իրաւացի պատասխանում են. «Դուք գանդատվում էք, իսկ ահա տեղական մարդիկ ինչ գովասանքներ են շռայլում գեներալ-նահանգապետի հասցէին»։

Երբ պէտք է վերջ տրվի շնորհակալական և գովասանական այս այլանդակութիւններին, որոնք ոչ մի արժէք չունեն ըստ էութեան, բայց թուլացնում են իրաւացի գանգատների նշանակութիւնը։

Միթէ մեր գաւառի մարդիկ ուրիշ ձև չունեն գործելու, այլ ընդունակ են ուղերձներ կազմելու, ինչպէս նախկին ժամանակներում անում էին փաշաներին գուր գալու համար։

Բաւական է։

—

Գանձակում հոկտեմբեր ամսի 13—15-ին ժողովներ տեղի ունեցան քաղաքային դումայի դահլիճում։ Ժողովներին մասնակցում էին հայ և թուրք գլխաւոր հոգևորականները և երկու կողմից ընտրված 7-ական հոգի։ Այդ ժողովներում Գանձակի հայ և թուրք ազգաբնակութեան ներկայացուցիչները, աչքի առաջ ունենալով որ կառավարութիւնը սրտին մօտ չէ համարում հայ-թուրքական յարաբերութիւնների հարցը և փոխանակ խիստ միջոցներով կատարված արիւնահեղութիւնները զսպելու, ընդհակառակը՝ թերանալով իր ուղղակի պարտականութիւնների կատարումից — տեղիք է տալիս խառնակութիւնների սաստկանալուն,—վճռեցին փոխադարձ պայմաններ կապել և ձգտել, որ չարագործները բռնվեն և դատի յանձնվեն, գրգռիչներին զսպեն, տարածված սուտ լուրերն ու գրգռիչ զրպարտութիւնները հերքվեն և այլն։

Քաղաքում կայացած ժողովը, դատելով անհրաժեշտ այդ համերաշխ և խաղաղարար գործունէութիւնը տարածել նաև Գանձակի գաւառի ու նահանգի վրա, որոշեց կայացնել հայ-թուրքական ընդհանուր ժողովներ՝ գաւառական և նահանգական։

Գաւառական ժողովին մասնակցելու են գիւղական տանուտէրերը, նրանց օգնականները և ուրիշ ազդեցիկ ներկայացուցիչները։ Այդ ժողովը, որ տեղի է ունենալու նոյեմբերի 10—15-ը, պէտք է զբաղվի նոյն խաղաղարար հարցով։

Գաւառական ժողովին ներկայ են լինելու երևի մօտ 100 հոգի։

Իսկ նահանգական ժողովը պէտք է բաղկացած լինի 42 հոգուց, որովհետև ամեն մի գաւառից մասնակցութեան են գալու 3 հայ և 3 թուրք ներկայացուցիչներ։ Նահանգական ժողովը տեղի է ունենալու նոյեմբերի 25-ից մինչև 30-ը։

Նոյեմբերի 2-ին Գանձակի հին բերդի մօտերը, այնտեղ, ուր շարված են թընդանօթները—թուրքական թագի կենտրոնում, գիշերով սպանված գտան մի մալական։ Զոհի դիակն այլանդակված է խայտառակ կերպով, երեսը պատառոտած, մատը կտրված և այլն։ Այդ ոճրի հեղինակները դեռ չեն գտնված։ Իսկ «Нов. Об.» լրագրին հեռագրում են նոյեմբերի 2-ին Գանձակից, որ գիշերը գաղանաբար սպանել են մի երեխայի և կողոպտել մի խումբ մօլոկանների։

—

Հին-Նախիջևանից ստացանք հետևեալ հեռագիրը, տրված նոյեմբերի 4-ին, առաւօտեան 11 ժամին։

Նախիջևանի գաւառում յարձակումներ, սպանութիւններ և տաւար փախցնելու դէպքերը չեն դադարում։ Սակայն ազգաբնակութիւնը այլ ևս չէ գաղթում, լրագիրների մէջ լոյս տեսած լուրերը, ժողովրդի չափազանց ընկճված տրամադրութեան և գաղթելու մասին հիմնաւոր չեն։ Ընդհակառակը, մնացածները ամրանում են և աշխատում են վերադարձնել փախած փոքրահոգի իրանց հայրենակիցներին։

Մեսրոպ Վարդապետ

—

Շամախու թեմի առաջնորդը հոկտեմբերի 29-ին ուղարկել է Վեհափառ Կաթողիկոսին հետևեալ հեռագիրը.

«Յայտնում եմ Ձեր սրբութեան, որ այն լուրը, թէ հայերը Միրզաբէգեանցի տնից գցել են ռումբ և անկարգութիւններ են առաջացրել—հնարովի է։ Միրզաբէգեանցները քաղաքից բացակայ են. նրանց բնակարանը դատարկ է։ Միւս բնակարաններում ապրում է պարսկական սահմանագծի կօմիսար Զօրջաձէ, դատաւոր Օրլով, անգլիացի Գաուլէն։ Զօրջաձէն իր աղջիկներով, որ նայում էին պատուհանից, հաստատում են, թէ ռումբը գցելը շինծու բան է։

—

Երևանից մեզ հաղորդում են հոկտեմբերի 2-ից. «Տեղս խաղաղ է, բայց հոկտեմբերի 30-ին, մօտաւորապէս երեկոյեան 6½ ժամին յանկարծ մի փողոցում լսվում են ատրճանակի ձայներ։ Ժողովուրդը սարսափահար սկսում է փախչել ձայնից, կարծելով թէ «բունտ» է։ Սակայն առաւօտեան պարզվեց, որ Սեվէրսկի դրագունների սպաներից մէկը իր շան վրա ատրճանակ է արձակել ու սպանել շանը (ի հարկէ նպատակը շատ պարզ է)։ Այն սպան է, որը կոպտաբար խուզարկում էր գլխաւորապէս հայերին և որին գիմնազիայի աշակերտները և քաղաքացիները պահանջում են հեռացնել։ Անհաւասիկ լարված մտքերը ինչպէս են երևան գալի երկու ազգերի մէջ։

Պարոյր Տէրունեան

—

Ստացանք հետևեալ հեռագիրը.

Բագու. 3 նոյեմբերի, գիշ. ժ. 10 և 40 ր.

«Դրութիւնը անհանգիստ է։ Խուլիգանական ֆիրմաները գործադուլ են արել խուլիգանների գլխաւորների ձերբակալման պատճառով»։

Այս հեռագրում յիշված «գլխաւորները» Պետրովը, Կօրօտկովը, Խարչենկովը և ուրիշներն են։ Իսկ «խուլիգանական ֆիրմաներ» կամ խուլիգանների բունը կազմող ֆիրմաների թւում համարվում են և անգլիական խոշոր ֆիրմաներն —Օլէում և Բօրն։ Այդ էր պակաս։

—

«Բանտարկվեց Ասլան Աշուրովը, թուրք խուլիգանների գլխաւորը»։

Կարդալով «Возр.» լրագրի մէջ այդ հեռագիրը մարդու սրտից կարծես մի ծանր քար վայր է գլորվում։ Վերջապէս գաղանների մէկը ծուռակն ընկաւ։ Բայց իսկոյն կասկածը նորից պաշարում է մարդու միտքը. արդեօք սրան էլ նորից անմեղ չեն հրատարակելու, ինչպէս նրա նմաններին Ալիխանով-Աւարսկին արեց Նախիջևանում, ինչպէս այսօր գեն. Տակայիշվիլին համարձակ կատարում է իր «խնամքին յանձնած նահանգում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

XI

Հարկաւոր է կազմակերպվել—ահա մի զօրեղ ձայն, որ հնչում է Ռուսաստանի ամեն կողմերից և անկիւններից և լայն արձագանք է գտնում։

Հարկաւոր է կազմակերպվել և մեզ հայերիս, իբրև քաղաքացիներ, իբրև նոյն Ռուսաստանի համազօր և համաիրաւատէր քաղաքացիներ և իբրև ազգ։

Բայց ինչու համար կազմակերպվել և ում դէմ կազմակերպվել։ Միթէ չը կան թէ Ռուսաստանում և թէ մեզ մօտ բազմաթիւ կազմակերպութիւններ. ինչ հարկ կայ նոր կազմակերպութիւններ ստեղծել։

Առաջ պատասխանենք այն հարցին թէ ինչու համար պէտք է կազմակերպվել և ում դէմ։ Այդ հարցը լօգիքաբար, անհրաժեշտօրէն ըղխել է այն ճիչից, որ ամբողջ Ռուսաստանը, ամբողջ Կովկասը Պլեվէի—Գօլիցինի ըէժիմի տապալումից յետոյ, երբ յանձին իշխան Սվեատօպօլկ-Միրսկու ծագեց նոր ըէժիմի արշալոյսը, արձակում է «ինչ անեմք» պոռալով ամեն անգամ, երբ տապալվող, հոգևաբքի ճգնաժամի մէջ գտնվող հին կառավարութիւնը մի կողմից ազատութիւն է խոստանում, միւս կողմից աշխատում է խեղդել այդ ճիչը անմեղների արքան վտակի մէջ։

Այո, ինչ անենք։

Այդ հարցը տրված է, ինչպէս շատ ճիշտ նկատում է „Рус. Вѣд“ լրագիրը, Ռուսաստանի համայն ժողովրդի բոլոր դասակարգերի առաջ, նրա բոլոր քաղաքական կուսակցութիւնների առաջ, և, կաւելացնենք մենք, այդ հարցը տրված է այն ազգութիւնների առաջ ևս, որոնք ենթակայ են սիստեմատիկ ջարդի, կոտորածի, աւերման հին ըէժիմի կողմից, ինչպէս հրէաները, հայերը։

Որպէս զի իմանանք ինչ անենք, քննենք գործերի արդի դրութիւնը։

Ոչ մի կասկած չը կայ, որ հին քաղաքական կազմը փլվում է, հոգին փչելու վրա է։ Վերջին ամիսների և մանաւանդ հոկտեմբերեան դէպքերը պերճախօս կերպով ապացուցին, որ հին շինութիւնից քար քարի վրա մնալու չէ և զուր են միանգամայն այն օրհասական ջանքերը, որ բիւրօկրատիան, հին ըէժիմը գործ է դնում կանգնեցնելու համար ահեղ փլատակումը, ստեղծելով «հակա-յեղափոխութիւն», կազմակերպելով ջարդեր, կոտորածներ։ Ստեղծել որ և է հիմնական բան բռնութեան, դաւադրութիւնների, ջարդերի միջոցով անհնարին է. անհնարին է և հին, փտած բեկորներից նոր բան ստեղծելը։ Ջարդերը, կոտորածները փողոցներում, զինուորական դիկտատուրան իր սպիտակ տէրրօրով—այն բոլոր զէնքերը, որոնց այժմ դիմում է ըէակցիան իր գոյութիւնը փրկելու և կործանվող միահեծան կառավարութիւնը պաշտպանելու համար—դրանք բոլորը բացասական նշանակութիւն ունեն։ «Այդ ըէակցիան—ասում է յիշեալ լրագիրը—չունի ստեղծագործական ոյժեր, նա անկարող է նոյն իսկ վերանորոգել թէկուզ կարճ ժամանակով դեռ նոր հոգին փչած պետական կազմը։ Բոլոր յոյսերը փրկութեան համար պէտք է ուղղվեն ուրիշ կողմն—ոչ յետ, այլ առաջ։ Պէտք է կառուցանել նոր պետական շինութիւն, համապատասխան ժամանակի պահանջներին և հասարակական կենցաղի նոր պայմաններին։ Այդ ստեղծագործական աշխատութեան մէջ կարող են և պէտք է մասնակցեն երկրի բոլոր կենդանի ոյժերը և նոր շինութեան առաջին քարերը նոյն իսկ այժմ պէտք է տրվեն։ Այդ գործը յետաձգել մի րոպէ անգամ չէ կարելի»։

Եւ, ճշմարիտ, րոպէ անգամ չէ կարելի կորցնել։ Սոսկալի է այն վիճակը, որի մէջ գտնվում է այժմ Ռուսաստանը և Կովկասը։ Անհրաժեշտ է ամբողջ երկրի խաղաղացումը, վերջ պէտք է դնել հրէաների, հայերի կոտորածին. վերջ պէտք է դնել խուլիգանութեան, որ ստեղծել և ղեկավարում է ըէակցիան։ Քանի ուշ չէ, քանի ամեն կողմից չէ վառվել հրդեհը, խոհեմութիւն է վերջ դնել ծագած հրդեհին, որ սպառնում է լափել ամեն բան։ Իսկ դրա համար միայն մի միջոց կայ, մի հատիկ արմատական միջոց—տալ հիմնական պետական օrենք—սահմանադրութիւն, համապատասխանող ժողովրդի կարիքներին և իղձերին։

Այդ հիմնական օրէնքը մշակել չեն կարող ոչ բիւրօկրատիական հաստատութիւնները, ոչ մասնաւոր անձինք. ինքն ժողովուրդը պէտք է մշակէ սահմանադրութիւնը։ Ռուսաստանի բոլոր քաղաքացիները, առանց ցեղի, կրօնի, դասակարգի խտրութեան պէտք է մասնակցեն նոր պետական կազմի ստեղծման։ Այդտեղ պէտք է գործադրել այս կանոնը. «չը կայ խտիր ոչ հրէի, ոչ հեթանոսի և ոչ յոյնի»։ Ուրեմն որքան շուտ գումարվի Պետական Դուման ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի ձայնատուութեան հիման վրա, այնքան լաւ, այնքան շուտ կը կատարվի երկրի խաղաղացումը։

Սակայն, որպէս զի Պետական Դուման կարողանայ աջողութեամբ կատարել իր ստանձնելի ծանր և դժնդակ գործը, պէտք է որ երկրի բոլոր պրոգրէսիստ, առաջադիմական տարրերը համախմբվեն, կազմավերպվեն, պէտք է բոլոր կազմակերպված ոյժերը միանան և ստեղծվի մի ընդհանուր, պրոգրէսիստ կուսակցութիւն, որի նպատակն լինի իրողապէս նուաճել այն ազատութիւնները, որ հոկտեմբերի 17-ի մանիֆեստը հռչակել է և օգնել Պետական Դումային մացնել կեանքի մէջ սահմանադրական սկզբունքները։ Այդ կուսակցութիւնը պէտք է հակադրէ իր ոյժերը ըէակցիային և չէզօքացնէ, անդամալուծէ նրա ջանքերը՝ խեղդել, ոչնչացնել սահմանադրական ազատութեան սաղմը։

Երբ ըէակցիայի հիդրան, բարձրացնելով իր գլուխը, սոսկալի ջանքեր է անում հետևողներ գտնել, ոյժեր որոնել ոչ միայն ազգաբնակութեան տականքների, ոչ միայն ժողովրդի ստորին խաւերի, այլ և հասարակութեան միջին և բարձր խաւերի մէջ, հասարակութեան և ժողովրդի ուրիշ խմբերի առաջադիմական ձգտումները կարող են միայն այն ժամանակ հաստատուն կանգնել, դիմանալ, երբ իրողապէս համախմբվեն և կազմակերպվեն։ Վերջին յաղթութիւնները ձեռք են բերել հասարակութեան և ժողովրդի կուլտուրական խաւերը և եթէ նրանք այդ յաղթութիւնները ձեռք բերելու ոյժ ունեցան, պէտք է ոյժ ունենան և պաշտպանելու նրանց։ Եւ քանի որ այժմ ազատութիւն է տրված կազմակերպել դաշնակցութիւններ, միութիւններ, ընկերութիւններ, մենք պէտք է օգտվենք այդ իրաւունքից և ազատութիւնից և կազմակերպվենք։

Ուրեմն մենք հայերս պէտք է կազմակերպվենք իբրև ռուսական քաղաքացիներ և հայեր և աշխատենք իրագործել տալ մեր կեանքի մէջ, ինչպէս և Կովկասի կեանքի մէջ սահմանադրական օրէնսդրութիւնը ու հանդէս դուրս գանք մեր ապագայ քաղաքական կեանքի համար որոշ, մշակված ծրագրով, որ համապատասխան է թէ մեր ընդհանուր-քաղաքացիական և թէ ազգայնական պահանջներին և իղձերին, որոնք մասամբ արտայայտված են այս տարվայ սկզբում հայկական համագումարի մշակած ծրագրի մէջ։

Մեր հասարակական կեանքի մէջ, մենք հայերս ունեցել ենք և ունենք մի կազմակերպված կուսակցութիւն, որ երկար ու ձիգ տարիներ յամառ կռիւ է մղել, ազգային՝ և կովկասեան—հասարակական ասպարէզում ըէակցիայի, խաւարի ու տգիտութեան դէմ։ Այդ կուսակցութեան դրօշակի տակ համախմբվել են միշտ հայ ազգի ամենաառաջադիմիտ, պրոգրէսիստ և ազատամիտ ոյժերը ու խաւերը։ Դա մշակական կուսակցութիւնն է, որ այնքան ահագին դեր խաղաց մեր ժողովրդի վերջին երեսուն տարվայ կեանքի մէջ։

Այժմ այդ նոյն մշակական-պրոգրէսիստ կուսակցութիւնը նորից հանդէս պէտք է գայ մեր քաղաքական կեանքի մէջ, աւելի լայն և ընդարձակ ծրագրով, մեզ համար քաղաքացիական և քաղաքական նուաճումներ ձեռք բերելու համար։ Եւ այս անգամ նա պէտք է հանդէս գայ, յարելով, ընդհանուր պետական գործերում, ինչպէս անցեալ անգամ յայտնեցինք, դեմօկրատիական-սահմանադրական կուսակցութեան։

Շահրիար

ԲԱԳՈՒԻ ՍԵՒ ՕՐԵՐԻՑ

I

Ես ապրում էի Բալիլովում, որը համարվում է Բագուի ռուս խուլիգանների կենտրոնատեղին. սրանց բոլոր պարագլուխները (Պետրով, Կորսակով, Խարչենկո, Կոզին և ուրիշները) այստեղ են ապրում։ Կազմակերպված ոյժ ներկայացնում են անգլիական Ֆիրմաների („Олеумъ“ և „Борнъ“) համարեա բոլոր բանուորները և ծառայողները, բացի մի քանի հայերից և վրացիներից։ Այդ ոճրագործ հարբեցողների խումբը միշտ աչքի է ընկել Բագուում իր անսահման լրբութիւններով և հասարակական կեանքը վրդովեցնող կեղտոտութիւններով։ Երբ Բագուում սկսվեց ակտիվ կերպով արտայայտվել ազատարար շարժումը, այդ խումբը աւելի կազմակերպվեց, աւելի ուժեղացաւ, աւելի մտերմացաւ կառավարչական և ոստիկանական մարմինների հետ և այդպիսով այդ մի ժամանակ հարբեցողների խառնիճաղանճ խումբը դարձաւ կազմակերպված ոչ-պաշտօնական ոստիկանութիւն, ստանձնելով վերջինիս բոլոր բացառական ֆունկցիաները։ Ո՞րքան անմեղ մարդիկ են բանտարկվել և աքսորվել այդ կամաւոր լրտեսների շնորհիւ, որքան վիշտ և տանջանք են պատճառել նրանք գործադուլներին մասնակցող բանուորներին։

Այդ խումբը առանձին թշնամութեամբ է միշտ վերաբերվել դէպի հայերը. չէ՞ որ հայը Բագուում մեծ դեր է կատարել ազատարար շարժման մէջ. բացի դրանից՝ հայը Բագուում ռուս բանուորների և արհեստաւորների միակ լուրջ կօնկուրենտն է, հայը իրեն միշտ անկախ է պահել և չէ ընկել խուլիգանների ազդեցութեան տակ և նրանց շրջանի մէջ. վերջապէս հայը բնազդմամբ արհամարում էր այդ կամաւոր լրտեսներին և չէր թագցնում այդ իր արհամարհանքը։ Խուլիգանները չէին կարող տանել այս բոլորը, մանաւանդ երբ տեսնում էին ինչպէս հայերին ռուսացնելու ջանքերը ապարդիւն էին անցնում։

Ցաւում էր նրանց ռուսական հոգին և պրաւոսլաւնի խեղճը և նրանք առիթներ էին որոնում վրէժ լուծել հայերից։ Ես շատ եմ լսել այդ հարբած խուլիգանների երգերի մէջ արմեաշկա խօսքը և սպառնալիքներ հայերի հասցէին և միշտ կարծել եմ, թէ դա մեզ համար մի անվտանգ վայրահաչութիւն է։

Այդ խուլիգանները առաջին անգամ մեզ խոցեցին հայ-թուրքական կոտորածների ժամանակ, երբ ակնայայտի կերպով ցոյց տուին իրանց համամիտութիւնը և համակրութիւնը թուրք մարդասպաններին և հրկիզողներին. նրանք խրախուսում էին թուրքերին և մասնակցում թալանների։ Եւ այդ ժամանակվանից ինձ միշտ թւում էր թէ թուրքերի գազանութիւնները Բագուում այդքան հեռու չէին գնայ, եթէ տեղի չունենար ռուս խուլիգանների խրախուսանքը։

Բայց այս բոլորը դեռ իրաւունք չէին տալիս կարծելու թէ կարող են տեղի ունենալ խուլիգանական սև օրեր Բագուում և որ այդ անզէն խուլիգանները իրանց գազանութիւններով և անխղճութիւններով անհամեմատ հեռու կը գնան, քան նոյն իսկ աշխարհք զարմացնող թուրքերը։

Երբ կարմիր և ուրախալի օրերին յաջորդեցին սև ու արիւնոտ օրերը (հոկտեմբերի 21-ին), Բայիլովը, խուլիգանների այդ բոյնը կերպարանափոխվել էր բոլորովին, տօնական արտաքին ստացել և ես կանգնած՝ իմ պատշգամբում տեսնում էի, ինչպէս ամեն կողմից գարշելի խլէզները դուրս էին սողում և ազգային դրօշներով դիմում դէպի ռուսաց եկեղեցին։ Մեծ էր նրանց թիւը և իրարանցումը, բայց չէր նկատվում նրանց երեսներին տօնական ուրախութիւն. մի ինչ որ դիւային արտայայտութիւն ունէին նրանց աչքերը. նրանց շարժումները և արտաքինը ցոյց էին տալիս, որ մարդիկ հաւաքվել են ինչ որ մեծ գործ կատարելու և որ այդ մարդիկ արդէն գիտեն ինչպէս պէտք է կատարել այդ մեծ գործը։

Եկեղեցին մաղթանք կատարեց և այդ ժխորը, որին միացել էին բաւականաչափ թուրքեր ու լեզգիներ Կայսրի և մի քանի սրբերի պատկերներով ու անհամար երեք գոյնի դրօշներով շարժվեց դէպի զինուորների բնակարանները (казармы сальянскаго полка), որտեղ զինուորները ընդունեցին եկեղեցիներին ուրախութեան նշաններով, բայց չը միացան նրանց, որովհետև հրամայված էր չը հեռանալ կազարմաներից։ Դրանցից բաժանվելով «ազգասէրների» օրդան դիմեց դէպի «Փլոտսկի էկիպաժը», որտեղ ապրում են զինուորնաւաստիները. վերջիններս ընդունեցին շատ սառը և խնդրեցին հեռանալ և երբ «ազգասէրները» գոռացին՝ «դուք դաւաճան էք», «ձեզ հայերը կաշառել են» և այլն, նաւաստիները պատասխանեցին. «դուք մարդասպաններ էք, արիւնռուշտ հրէշներ», «մենք ձեզ հետ ոչ մի կապ չունենք», հեռացէք այստեղից»։ Եւ որպէս զի թոյլ չը տան այդ հարբած ազգասէրներին ներս խուժել իրանց բընակարանները, եօթը նաւաստիներ սուիններով դուրս եկան և փախցրին այդ 5000-ից աւել ամբոխը։ Սուիններով պատռվել էր և Կայսրի պատկերը։

Այդ դէպքից յետոյ ամբոխը աւելի կատաղած, աւելի տրամադիր եղեռնագործութիւնների դիմեց դէպի քաղաք և նրանց միաբերան արձակած «ուռան» սարսուռ էր ազդում մարդու վրա և զգացնել էր տալիս, որ սպասվում է մի ինչ որ դժոխային խաղ։ Դեռ Բայիլովում նրանք սպանեցին երկու պատահած հայի և կիսամեռ ծեծեցին մի ռուսի (акцизный учетчикъ Боденко), որը կարմիր ժապաւէն է ունեցել կրծքին։

Այդպէս գնաց քաղաք ազգասէրների առաջին խումբը։

Մի ժամից յետոյ եօթը նաւաստիներին բանտարկեցին, միւսներին զինաթափ արին և «էկիպաժի» պահպանութիւնը յանձնվեց հեռակայ զինուորներին, որոնք վերցրին և էկիպաժային դրօշը։ Կարճ ժամանակից երևացին և կօզակներ, որոնք նոյնպէս շրջապատեցին նաւաստիներին։ Երբ կօզակները եկան, նաւաստիները դիմեցին նրանց՝—«եկէք այժմ մեր կազարմաները թալանեցէք, երևի քաղաքում այլ ևս բան չէ մնացել թալանելու։»

Մ. Շ.

ԱՍՊԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌՈՒՄ
(Նամակ Գանձակից)

Նոյեմբերի 1-ին

Երբ «ազատութիւն, սահմանադրութիւն, մարդկային իրաւունքներ, ազատ Ռուսաստան» ու այլ դրանց նման տենչալի ոգևորիչ բառեր հասան մեր ականջին, երբ հեռագիրն աւետեց, որ մենք այլ ևս հրու-հնազանդ, «հպատակ» ստորացուցիչ անունը կրող իրաւազուրկ արարածներ, պարիաներ, ստրուկներ չենք, այլ ազատ երկրի ազատ քաղաքացիներ, մեզ ևս տիրեց տօնական տրամադրութիւն, մեր քաղաքի փողոցներում էլ երևաց աշխատաւորամասսայի կարմիր դրօշակը ու տօնեցինք առաջի փառաւոր յաղթութիւնը։ Բայց մի բազմերախտ դրօշակ, պրոլետարիատի դրօշակից ոչ պակաս փառահեղ, գաղափարական ու սուրբ, որը տասնհինգ տարի է ինչ ըստ արժանւոյն կրում է իր վրա «ազատութիւն կամ մահ» մեծախորհուրդ, սերունդներ թեաւորող, վառող ու ոգևորող բառերը, յետաձգեց իր հանդիսաւոր ելքը, քանի որ յայտնի դարձաւ հաստատապէս, որ մեր քաղաքի հակայեղափոխական տարրերը, մութ ոյժերը, Բագուն, Օդեսսան, Թիֆլիսը սպանդանոց դարձնող խուլիգանները այն նուիրական դրօշակի տակ ընթացող ժողովրդից, հայերից, են առնելու իրանց վրէժը, նրա արիւնով են մտադիր, յագեցնել իրանց ծարաւը... Մենք կարծում էինք, թէ սահմանադրութեան յայտարարմամբ, բիւրօկրատիական վայրագ սիստեմի անկմամբ, մեր ֆիզիքական գոյութիւնը ըսպառնացող յայտնի չարիքը անհետ կը կորչի։

Մեր հարևան թուրքերի մէջ էլ այդպէս կարծում էին շատերը. նրանք նոյն իսկ անագին բազմութեամբ, կարմիր դրօշակի տակ, նուագածութեամբ, հոկտեմբերի 21-ին, եկան հայոց ս. Յովհաննէս եկեղեցու մօտ ու ճառեր խօսեցին համերաշխութեան ու եղբայրութեան մասին. հայերից էլ նոյն բովանդակութեամբ ճառեր լսեցին ու հեռացան ուրախ տրամադրութեամբ։ Հայերը որոշեցին թափոր կազմել ու դրօշակի տակ գնալ մզկիթի հրապարակը ու հրաւիրել դարաւոր հարևաններին դէպի համերաշխ ու բարեացակամ կենակցութիւն։ Բայց շուտով պարզվեց, որ սև հարիւրակը, այստեղ-այնտեղ վխտացող խուլիգանները յարմար առիթ են փնտռում նոյն բարեկամ թուրքերին իրանց ձեռքում գործիք դարձնելու հայերից վրէժ առնելու համար. հայերն այդպիսով ստիպված եղան, փոխանակ տօնելու պանծալի ազատութեան տօնը, սեղմել իրանց շարքերը ինքնապաշտպանութեան համար։ Այդպիսով մենք հնարաւորութիւն չունենք տօնել ազատութեան յաղթանակը, հրճվել, խնդալ, ծրագիրներ կազմել լայն կուլտուրական գործունէութեան համար, քանի որ մենք մի ոտով, յաճախակի նոյն իսկ երկու, գտնվում ենք դեռ միջին դարերում, հանդիսատես ենք միջնադարեան արհաւիրքների։

Օրչէ անցնում, որ գաւառի այս կամ այն անկիւնում աղէտ, արիւնահեղութիւն չը պատահի։ Զը նայած ազատութեան, սահմանադրութեան յայտարարման, Կովկասի շատ անկիւններում, ի հարկէ, մեր Գանձակի նահանգում աւելի աչքի ընկնող կերպով, ազատ, անարգել սաւառնում է դեռ Կովկասեան դուքս Ալբայի, Կովկասի նախկին տիրահռչակ կառավարչապետի, իշխ. Գոլիցինի մարդատեաց, առաւել ևս ճայատեաց հոգին. նրա քաղաքականութիւնը ծաղկում է, նրա ձագուկները ծածուկ—աշկարայ գործում են ու աշխատում ամեն կերպ՝ դժոխք դարձնելու «բերկրալի երկիրը» հայ ժողովրդի համար, չքաւորացնելով նրան, ոչնչացնելով նոյն իսկ ֆիզիքապէս յարմար առիթ պատահած դէպքում։

Դառնանք արդի դժոխային դրութիւնը պատկերացնող նորագոյն փաստերին։ Հոկտեմբերի 8-ին թուրքերը քշել են Ղարաբուլաղ հայ գիւղի ձիաները։ 10-ին Գերանում ծանր վիրաւորվել է դաշտային աշխատանքների ժամանակ գետաշէնցի Յակ. Զաքարեանը, մեռել է վերքից 17-ին։ 10-ից մինչև 18-ը մի քանի անգամ տաւար են տարել Ղարաբուլաղ հայ գիւղից։ 18-ին քշել են գետաշէնցի կալուածատէր Մէլիք-Մնացականեանի տաւարը։ 19-ին զօղլարեցի թուրքերը յարձակվում են Մէլիք-Մնացականեանի մարդկանց վրա, քշում են տաւարը, բայց հրացանաձգութեան չը դիմանալով, թողնում են տաւարն ու փախչում։ 18-ին թուրքերի կազմակերպված սպառազինված խումբը, Լարինեան կօզակների գնդի ուսնոցներ (պագօններ) կպցրած ուսերին, յարձակվում են Աբլահ գիւղի հայերի վրա, բայց չեն դիմանում վերջիններիս հակայարձակման ու փախչում են։ 20-ին Սեֆուսոյ գիւղի թուրքերի ձեռքով սպանվել է գետաշէնցի Սարգիս Առստամեանցը։ 20-ին քշել են գետաշէնցի Յովհաննէս Եպիսկոպոսեանցի տաւարը։ 19-ին քշել են Ղարաչինար (Աղջաղալա) հայ գիւղի տաւարը թւով 127 գլուխ։ 21-ին թուրքերի մի կազմակերպված խումբ յարձակվում է Արմաւիր ու Ղարաբուլաղ հայ գիւղերի վրա.

հակայարձակման առաջ փախչում են, վիրաւորելով զարաբուլաղցի Զումշուդին ու թողնելով հայերի ձեռքին չորս գերի, որոնց ուսերի վրա լինում են Լաբինեան գնդի ուսնոցներ. չորսն էլ գտնվում են այժմս Գանձակի բանտում։ Նախընթաց օրը այդ ուսնոցաւոր Թուրքերը շրջապատել են Ղարադաղլու գնացող կօղակ օֆիցերին ու չորս կօղակներին ու փախել են կարճ հրացանաձգութիւնից յետոյ։ 22-ին Թուրքերի մի սպառազինված խումբ փորձում է քշել գետաշէնցիների տաւարը, բայց անաջող. տեղի ունեցած հրաձգութեան ժամանակ Թուրքերից սպանվում են երկուսը և երեքը վիրաւորվում։ Թուրքերը Գեօջալիլար գիւղից են լինում։ 23-ին Թուրքերի մի ստուար կազմակերպված խումբ գալիս է նոյն դէպքի վայրը հայերից վրէժ առնելու, բայց փախչում է, չը դիմանալով հրաձգութեան։ 22-ին Կարաեագդի անուն կրող տեղում Թուրքերի ձեռքով սպանված է մի հայ Արմաւիր գիւղից. 22-ին Հարամի-դեարա ձորում դարանամուտ Թուրքերը ծանր վիրաւորում են ուսից Բանանց գիւղի բնակիչ Գրիգոր Տէր-Մկրտչեանցին, ճանապարհով անցնող միւս հայերը հրաշքով ազատվում են մահից. դարանամուտ Թուրքերը փախչում են բանանցեցի Իվան Եպիսկոպոսեանցի հրացանաձգութիւնից ահաբեկված։ Հոկտեմբերի 23-ին մի նոզկալի եղեռնագործութեամբ պսակվում է յանցանքների այդ երկար շարքը. Քօլանդաղ կիրճում կազմակերպված Թուրք հրոսակախմբի ձեռքով սպանվում են Գանձակից տուն վերադարձող հինգ զարաչինարցի հայեր (տանուտէր Դուխան Կիզիրեանց, Սարգիս Ղազարեանց, Յանէս Մարինեանց, Թէոդոս Իւանեանց ու Զաւադ Կիզիրեանց) սպանվում են ամենատարադի կերպով, գետակի ափին նստած նախաճաշելիս։

Ստ. Տէր-Աւետիքեան

ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

—

Օրը պարզ էր և զեղեցիկ։ Հայոց եկեղեցու քակից մինչև Լազարեանի տունը ասեղ ձգելու տեղ չը կար։ Կանգնած էր ձիաւոր և հետևակ զօրքը։ Շրջանաձև կանգնած ամբոխի կենդրոնում դրված էր սեղան, ճառախօսների և ճառեր կարդացողների համար։ Ներկայ էին՝ Նահանգապետ Տակայշվիլի, Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեան, հայ և Թուրք ընտրեալները և խուռն բազմութիւն։

Թէ հայերի և թէ Թուրքերի կողմից կարդացին գեղեցիկ և իմաստալից, դաշնադրութեան ոգևորիչ ճառեր, նախ հոգևորականները և ապա աշխարհական անձինք։ Երկար խօսակցութիւններից յետոյ սեղան ելաւ ինքը նահանգապետը, հեռևեալ խօսքերը արտասանեց.

Ամբողջ Ռուսաստանի և Զանգեզուրի այսօրվան ուրախ հաշտութեան վրա ծագել է արեգակ։ Ողորմած Թագաւոր Կայսրը շնորհ է արել, իր վերջին հրովարտակով Ռուսիայի համայն ժողովրդին, և հաւասար է Նրա շնորհը բոլոր ազգութիւնների համար, որպէս արևի ճառագայթ։ Եւ երբ, այսպիսի մի փառաւոր օր, դուք, Զանգեզուր գաւառի հայ և Թուրք ժողովուրդ, դուք որ խմբվել էք մի ընդհանուր եղբայրական միութիւն հաստատելու, ձեր դաւոր դրացիութիւնը շարունակելու համար դաշն կապելու, մոռանալու մինչև այժմ միմեանց պատճառած վնասները և սպանութիւնները, լսեցէք, և ինձ լսեցէք, իմ խօսքը տարածեցէք ամեն գիւղում։ Զը մոռանաք և Թագաւոր և ողորմած Կայսրի վերջին հայրական շնորհով ողջունելու ամեն մի գիւղացու, որ չէ կարողացել ներկայ գտնվել։ Ընդունելով Թագաւոր Կայսրի մեծ շնորհը, ցանկանանք կեանք և արևշատութիւն Նրան. գոչենք միաբերան «ուռռա»։

Գօրքի ամբողջ կաթսայաձև հովիտը թնդում էր ուռռայով և կեցցէներով։ Ապա, Թուրքերի կողմից Նազար բէգը և հայերի կողմից Մելիք-Փաշայեանը, դիմեցին՝ առաջինը հայ և երկրորդը Թուրք ժողովրդին և փոխադարձ ներողութիւն խնդրեցին միմեանց հասցրած վնասների համար։ Խաղաղութիւնը կնքվեց։ Ամբոխը հետևեց նահանգապետին, բոլորեքեան ցրվեցան ուրախալի ժպիտները դէմքերին։

Երեք ամսվայ չափ տևեցին մեր երկրի ընդհարումները և կոտորածները, սակայն բաղտ ունեցանք հաշտութիւն ևս տեսնելու։ Հայ և Թուրք ժողովուրդը կարծէք թէ, մի մեծ սխալ գործած լինին երկուսով, որի պատճառով միմեանցից քաշվում են պարզօրէն միմեանց դիտելու։

Գիւղերում էլ երբ միմեանց հանդիպում են, այս ինչ բան էր ասէր, որ մեր մէջ ընկաւ և այսպէս մեր սիրուն բարեկամական կապերը խախտվեցան. փառք քեզ Աստուած, ասում և ծիծաղում են հայը և Թուրքը։

Կապված է հաշտութեան պայմանը և հաւատացած ենք միմեանց և Թող ընդմիշտ էլ տևի այդ դաշինքը իր բոլոր մանրամասն կէտերով։

Ինչպէս ծարաւի երկիրը անձրև է ընդունում, այնպէս էլ մենք, Զանգեզուրի հայերս խաղաղութիւն ենք գրկում։ Նահանգապետը շուտով կը մեկնի։

Սաղանդարեան

ԳԱՒԱՌԱՊԵՏ ՁԵՐԲԵԶՈՎԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Շարուր-Դարալագեղի գաւառապետ Զերքեզովը հարայ-հրոցով զեկուցում է տալիս գենեռալ Շիրինկինին, որ հոկտեմբերի 27-ին Դարալագեղի հայերը, թւով մօտ 800 հոգի, յարձակվել են Թուրքաբնակ Հորս գիւղի վրա, այրել և քարուքանդ են արել նրան, սպանելով բաւականին Թուրքեր և քշելով բոլոր անասուններին։ Բարեխիղճ, մարդասէր և ազատամիտ Զերքեզովի այդ տուած զեկուցումը որքան ճիշտ է, այդ միայն Աստուած գիտէ։ Բայց բանն այն է, որ, ընթերցողներ, Կիլիկիայի հայոց թագաւորութեան անկումից յետոյ երբ և իցէ լսե՞լ, տեսե՞լ էք, որ 800 հոգի հայեր միախորհուրդ լինեն և համախմբվեն մէկ տեղ մի հոգով և մի գաղափարով մի որ և է քաջութիւն կամ սրբազան գործ կատարելու համար...

Անցեալ մայիսի 31-ին Դարալագեազից 24 հոգի հայեր էին յարձակվել Նախիջևանի գաւառի Իթկուան գիւղի վրա Թուրքերից վրէժ լուծելու համար։ Բայց Թուրքերը բազմացրին, որ իբր թէ Իթկեանի վրա յարձակվել են 20,000 հայեր։ Երևի հորսեցի Թուրքերը պ. Զերքեզովին յայտնել էն, որ իրանց գիւղի վրա յարձակվել են 8000 հայեր, բայց պ. գաւառապետը այդ թիւը չափազանց համարելով, կրճատել է և շինել է 800.

Եթէ հայերը աւերել են Թուրքական Հորս գիւղը, մենք նրանց այդ վարմունքը չենք շոյում. բայց բանն այն է, որ մայիսեան աղեռների ժամանակ Շարուրի և Նախիջևանի գաւառներում երբ տասնեակ հայկական գիւղեր հրդեհվում և քարուքանդ էին նում Թուրքերի ձեռքով, Զերքեզովները Զաքարիայի պապանձում էին պահել, կամ թէ նկարագրում էին աւելի մեղմ կերպով, և ոչ թէ այդ տեսակ աղմուկ բարձրացնելով։

Ուրեմն Զերքեզովների համար հայի քարը ծանր է և եթէ նա քաջութիւն է գործում, պիտի նրան դատապարտել, թքել, անպատուել և հրապարակով խայտառակել. իսկ եթէ Թուրքն է աւերում կոտորում. դա ոչինչ, նա Թուրք է, սովոր է այդպիսի բաներ անելու...

Քանի Զերքեզովների նման անաչառ դատաւորներ են նստած ներկայ ադմինիստրացիայի գահի վրա, երկար պէտք է արիւն և արտասուք հոսի մեր դժբախտ երկրում։ Միթէ այստեղ չէ արդարանում ռուս առակախօսի ասածը՝ «И велѣно волка въ овчарню посадить».

Գ—ունի.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

(Իբսէնի «Հասարակական նեցուկները» հայկական բեմի վրա)։

Հինգշաբթի, նոյեմբերի 3-ին, Թիֆլիսի արտիստական թատրոնում հայ դրամատիկ խումբը ներկայացրեց Իբսէնի «Հասարակութեան նեցուկներ դրաման 4 գործողութեամբ։

Այդ դրաման Իբսէնի աչքի ընկնող թէ և ոչ կատարելապէս աջողված գրուածքներից մէկն է և պարունակում է իր մէջ այն հիմնական միտքը թէ հասարակութեան հին նեցուկները խախուտ են և թէ նորագոյն կեանքը պէտք է կառուցանել «ազատութեան եւ ճշմարտութեան» վրա, ինչպէս բացականչում է գլխաւոր հերոսներից մէկը՝ օրիորդ Հէսսէլ։

Հասարակութեան հին նեցուկները, որոնք յենասիներ էին համարվում, այն է ծագումը, տոհմականութիւնը, հասարակական դիրքը, հոգևորականութեան և կապիտալի առանձնաշնորհները, միացած ձևականութեան և փարիսեցիութեան հետ, այժմ կորցրել են և կորցնում են իրանց հեղինակութիւնը և յարգանքը։ Նոր կեանքը նոր սկզբունքների նոր հիմունքների, նոր նեցուկների է կարօտ։

Իբսէնի պիեսների մէջ առ հասարակ պակասում է աշխոյժը և բեմական տեխնիկան. բայց նրանք գրաւում են հանդիսականին իրանց գաղափարով, իրանց բովանդակութեամբ։ Իբսէնի պիեսները պահանջում են դերասաններից լուրջ վերաբերմունք և դերերի լաւ ուսումնասիրութիւն։ Եթէ դերասանները փոքր ինչ զանցառութեան են տալիս իրանց պարտաւորութիւնը, պիեսի բեմականութիւնը և տպաւորութիւնը զգալի կերպով վնասվում են։

«Հասարակութեան նեցուկների» ներկայացումը հայկական բեմի վրա կատարեալ չէր։ Ճիշտ է գլխաւոր դերերը լաւ կատարվեցին, բայց խաղը դանդաղ էր, անսամբլը զուրկ ջերմութիւնից։ Գուցէ ազդել էին դերասանների վրա և շրջապատող յուզիչ դրութիւնը, և հանդիսականների սակաւութիւնը, բայց ցանկալի է, որ Իբսէնի պիեսը աւելի ոգևորութեամբ կատարվէր և ոչ պակաս ցանկալի է, որ հասարակութիւնն էլ խրախուսէր դերասաններին իր ներկայութեամբ։

Վատ չէր լինել ներկայ սեզօնում մի անգամ ևս դնել այդ պիեսը։

Առանձին դերակատարութիւնների մասին այս անգամ չենք խօսում։

Սիրող

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԽԱՐԿՕՎՈՒՄ

I

Հոկտեմբերի 10-ին

Խաղաղ Խարկովն էլ ալեկոծվեց։

Խարկովը թէև կազմում է Ուկրայնայի կենտրոնը և յայտնի է իր համալսարանով և երկաթուղու ցանցով իր բազմաթիւ բանուորների հետ միասին, բայց նա համեմատաբար Ռուսաստանի միւս քաղաքներից աւելի խաղաղ է եղել և այն շարժումները, որոնք աւել կամ պակաս չափով տեղ են գտել այս և այն քաղաքում շատ քիչ արձագանք են գտել Խարկովում, սակայն նայելով իրերի դրութեանը այլ բան է սպասում այժմ խաղաղ քաղաքին։

Այստեղի ձիաքարշը պատկանում է բէլգիական անօնիմ ընկերութեան, այն ընկերութեան, որի ձեռքին է նաև Թիֆլիսի տրամվայը, որի բանուորները Թիֆլիսում անցեալներում—բաւականին երկար գործադուլ յայտարարեցին։ Եւ ինչպէս երևում է այդ ընկերութիւնը շատ վատ պայմանների մէջ է պահում իր ծառայողներին, որովհետև Խարկովում առաջին գործադուլ սկսողները եղան ձիաքարշի ծառայողները և բանուորները։

Մի շաբաթի չափ ձիաքարշը կանգ էր առել և ճիշտ այն պատմութիւնը ինչ տեղի ունէր Թիֆլիսում՝ տրամվայի դիրեկտօրի և Բելգիա նստած վարչութեան մէջ փոխանակվող գրագրութիւնների պատճառով, տեղի ունէր նոյնը Խարկովում։ Դիրեկտօրը իրեն իրաւունք չէր համարում բաւարարութիւն տալ ծառայողների և բանուորների պահանջներին և ձիաքարշը շարունակում էր կանգնել. վերջապէս երէկ, ժամը 4-ին, ճաշից յետոյ ձիաքարշը սկսեց երթևեկել. արդեօք նրա ծառայողները և բանուորները բաւարութիւն, ստացան թէ ոչ այդ չը գիտենք, միայն այդ երթևեկութիւնը տեւեց շատ կարճ և գործադուլը այսօրվանից ընդունեց մեծ չափեր։

Այսօր քաղաքում լուր տարածվեց, որ երկաթուղիների ընդհանուր գործադուլ է, որ բոլոր գծերը կանգ են առել և սպասում է բանուորների մեծ հոսանք դէպի քաղաքը, ի հարկ է այսպիսի լուրերը հրապարակ հանեցին բոլոր դժգոհ տարրերը, որոնց շարքերը գնալով ստուարանում են բոլոր քաղաքներում։

Ցերէկվայ ժամը 2-ին, Մոսկովեան բանուկ փողոցներում յայտնվում են բանուորական խմբեր, որոնք կանգնեցնում են ձիաքարշը. իբր շուռ են տալիս մէկ թէ երկու վագոններ։ Բոլոր փողոցի երկարութեամբ խանութները փակվում են, մի քանի տեղ կոտրատվում են խանութների ապակիները—այդ փողոցի երկու ծայրերը փակում է զօրքը, ձիաքարշը ամեն տեղ կանգ է առնում։

Ժամը 2½-ին բանուորների մի մեծ խումբ Մոսկովեան փողոցից Նիկոլաեվեան հրապարակը կտրել—անցնելով կանգ առաւ համալսարանի դիմաց և ցոյց արեց, պահանջելով ուսանողութեանը միանալ իր հետ և գնալ դէպի երկաթուղու կայարանը, ուր լինելու է բանուորների ժողով։ ուսանողութիւնը ողջունեց ցուցարարներին և նրանցից մի մասը միացաւ բանուորներին։ Քաղաքից մի մեծ հոսանք անընդհատ դիմում էր դէպի կայարան։

Երեկոյեան ժամը 6-ին, համալսարանում նշանակված էր հայ ուսանողական զեմլեաչեստվայի ժողովը, որի մասին նախօրօք յայտարարված էր Խարկովի թերթերում. ուսանողները սկսեցին երեալ աւելի ուշ և աւելի փոքր չափով քան սպասելի էր. քաղաքի դրութիւնը երևի շատերին յետ էր պահել։ Ժամի 7-ին մօտ էր, երբ առաջին աուդիտորիայում, որը գտնվում է երկու փողոցների անկիւնում—երկրորդ հարկում և ուր պիտի կայանար ժողովը լցվեց հրացանների տրաքոց, համալսարանի անկիւնում հրացանները ձեռքներին կանգնած էին մի քանի դրագուններ և դուրս եղողները յայտնեցին, որ համալսարանի անկիւնում հաւաքված էր ամբոխ, որի վրա և արձակել էին հրացանից դրագունները և մէկին վիրաւորել։ Անյարմար դատվեց խորհրդակցութիւնը և ժողովը ցրվեց։

Փողոցներում խառնված էր ժողովուրդը, այստեղ և այնտեղ նկատելի էին զօրքեր, բայց ոչ մեծ քանակութեամբ. նշանները լաւ չէին։ մօտաւորապէս ժամը 10-ին—երեկոյեան լսելի եղաւ հրացանների պայթոց—հետաքրքրութիւնը դուրս քաշեց. փողոցներում խումբ խումբ կանգնած պատմում էին ցուցարարների և զօրքերի մէջ տեղի ունեցած ընդհարումների մասին։ Նիկոլաևեան հրապարակի վրա Կոստիարնոյի գրավաճառանոցի պատերի վրա նկատելի էին գնդակի տեղեր, պատմում էին, որ այդտեղ ծանր վիրաւորվել էր մի ուսանող։ Այդտեղից աւելի ևս ցած նոյն այդ հրապարակի և Մոսկովեան փողոցի անկիւնի տրօտուարի աղիւսները քանդված էին և ապակիներ կոտրատված. այդտեղ նոյնպէս տեղի էր ունեցել ընդհարում, որի ժամանակ ծանր վիրաւորվել էր մի զինուոր։

Բանուորական համախմբումներ տեղի են ունեցել նաև մի քանի այլ տեղերում, ի միջի այլոց Եկատերինօսլավեան փողոցի ծայրում, ուր յարձակվել և թալան էր տվել ամբոխը Տարնապօլսկու զինավաճառանոցը։

Որքան է վնասվածների թիւը յայտնի չէ, թեր ևս շատ էլ չը լինի, սակայն նշանները լաւ չեն և վաղը սպասվում է արիւնահեղ դէպքեր։

Զգում եմ նամակս պօստ հասցնելով թէ երբ նա տեղ կը հասնի—հաւանօրէն երկաթուղու երթևեկութիւնը այնքան էլ շուտ չի վերսկսվի։

Ա.—Դօ

—

Յ. Գ. Մոռացանք գրել, որ Սուսկոյ փողոցի վրա ջարդոտված են «Южный Край» այրված թերթի—խմբագրատան լուսամուտներ։

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

—

Հոկտեմբերի 17-ին

Ամսիս 1-ից այստեղ սկսվեց հրատարակվել մի նոր ամենօրեայ ռուսերէն լրագիր «Батумъ» անունով՝ տեղիս տպարանատէր տիկ. Գուրսկայի խմբագրութեամբ։ Ինչպէս սովորաբար գրվում է, թերթի ճակատին դրոշմված են «քաղաքական, գրական և հասարակական լրագիր» մեծահնչուն բառերը, որոնց սակայն դէպի ի չարը գործադրելու համար դժբախտաբար մինչև այժմ կեանքը դեռ չէ ստեղծել, խօսքի ամբողջ իմաստով, ոչ հասարակական ուժեղ կարծիք և ոչ էլ համապատասխան պատիժներ։ Ճիշտ այդպէս գրվել և գրվում են այն բոլոր թերթերի ճակատին, որոնք իրանց գոյութեամբ միանգամայն չարիք են հանդիսացել և հանդիսանում մարդկային ցեղի խաղաղ բարգաւաճման համար։

Հէնց առաջին թերթի խմբագրական յօդուածում լրագիրը շատ գեղեցիկ բառերով ըստ երևոյթին խոստանում է լինել անկողմնապահ, արդարադատ, խաղաղարար և հասարակական շահերին ծառայող, ճիշտ այնպէս, ինչպէս որ կը վայելէ ամեն մի առաջադէմ օրգանի։ Ճիշտ նոյն խոստումներն էր անում նաև նախկին «Чѣр. Вѣст.»-ը, որի վերջերում ինչ հրէշ լինելու մասին մենք արդէն մի քանի անգամ առիթ ունեցանք գրելու «Մշակ»-ում։ Ճիշտ նոյն խոստումներն էր անում նաև ներկայ «Чѣр. Вѣст.»-ը, որի տակից սակայն սկսել է շատ փիս «սոխ ու սրխորի» հոտ փչել։ Բարոյական բովանդակութեամբ ֆրազներ գոռալը հեշտ բան է, բայց գործնականի մէջ նրանց տևողաբար ի կատար ածելու համար հարկաւոր է իսկապէս

բարոյական ոյժ, արմատապէս իւրացրած ազնիւ [ձգտում, անկեղծ սիրտ և հաստատկամք։ Ինչ և իցէ. մի կողմ թողնելով թերթի ապագայ գործունէութեան [մասին զուշակութիւններ անելը, մենք, որպէս առաջադէմ թերթի, ողջունում ենք նրա երևան գալը և ցանկանում նրան [աջողութիւն՝ իր տուած խոստումների մէջ հաստատ մնալու համար։ Թերթի մեծութիւնը «Новое Обоз.»-ից քիչ փոքր է. գինը թանգ չէ. Բաթումում՝ 5 բուբլի, դուրսը՝ 6 բուբլի է տարեկան։

Գ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Քանարաղեաղ, հոկտ. 20-ին

Թրքական զաղանութիւններին զոհ եղած ազգիս սկզբնական [կարիքներին լուսայոլս օգնելու համար որոշեցինք մեր առևտրական տան մի տուրք, ոչ անհրաժեշտ ծախքերը կրճատելով, հացնել պատուական խմբագրութեանդ ամսական 50-ական բուբլի մէկ տարի ժամանակով. (1 հոկտ. 1905 թ. մինչև 1 հոկտ. 1906 թ.) խնդրելով հացնել Վեհափառ հայրիկի կազմուած յանձնաժողովին։

Բէզալաեան, Ա. Կարապետի և ընկերութեան կառավարիչ—անդամ Աղաբէկ Կարապետեան։

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսում լուր է ստացվել, որ Օդեսայի քաղաքացիներն ուղերձ են ներկայացրել Իրանց փաղափի համալսարանի Կովկասցի ուսանողներին—հայ և վրացի, նրա համար, որ դրանք անձնազոհութեամբ ու ասպետաբար կուել են խուլիգանների և ուրիշ մութ մարդկանց դէմ վերջին արիւնհեղութիւնների ժամանակ և ազատել են բազմաթիւ անմեղ ու անպաշտպան անձերի կեանքը։

—

Բագուում լուրեր են տարածված եղել, որ հրէաներին կոտորելու և կողոպտելու համար պատրաստվում է խուլիգանական ցոյց։ Այդ առիթով Բագուի հրէաների գլխաւոր բարի Բէրզէրը դիմել էր Կովկասի Փոխարքային և խնդրել, որ միջոցներ ձեռք առնվեն ապօրինութեան և զաղանութիւնների առաջն առնելու համար։ Փոխարքան նորից հեռագրել է Բագուի զեն.-նահանգապետին ձեռք առնելու անհրաժեշտ միջոցներ հրէաներին պաշտպանելու համար, բացի դրանից՝ առաջարկել է թոյլ չը տալ ոչ մի ցոյց։

—

Թիֆլիսում հայոց Կիլիկիոյայ իգական դպրոցի ուսուցիչների և վարժուհիների ընդհանուր ժողովը իր վերջին նիստում կայացրել է հետևեալ որոշումները. 1) Միանալ Կովկասի ուսուցիչների դաշնակցութեանը։ 2) Աստիճանաբար խնդրել ուսուցիչների բիւրօում մտցնել մի [անդամ տեղական կիրակնօրեայ դպրոցների կողմից։ 3) Ուսումն սկսել՝ համաձայն ուսուցիչների դաշնակցութեան որոշման։ 4) Թիֆլիսի մի քանի թաղերում էլ հիմնել մի քանի կիրակնօրեայ դպրոցներ, մանաւանդ Հալաբարում, երկսեռ հայ մանուկների համար։ 5) Թիֆլիսում հիմնել «Կովկասում դրագիտութիւն տարածող ընկերութիւն», մասնաճիւղերով Կովկասի զանազան քաղաքներում։ Այդ վերջին առաջարկն իրականացնելու համար ընտրվեց մի յատուկ յանձնաժողով։

—

Պետերբուրգից հեռագրում են նոյեմբերի 2-ին „Н. Об.“ լրագրին. «Իրաւաբանական տեսակէտով մերժվեց Կրօնշտատտի նաւատիների յանցանքը կոչել ապստամբութիւն։ Նրանց դատի են ենթարկում հարբած վիճակում անկարգութիւն անելու և կողոպուտի համար. բայց այդ յանցանքները մահվան պատժի չեն դատապարտում, որովհետև վարչութիւնից կարգադրութիւն չէր եղած, որին նաւատիները հնազանդված չը լինէին»։

—

„Возр.“ լրագիրը Պետերբուրգից ստացել է հետևեալ հեռագիրը նոյեմբերի 2-ին. «Ընդհանուր քաղաքական գործադուլն սկսվեց. լրագիրներ չը կան։—„Прав. Вѣст.“-ը հաղորդում է, որ Կրօնշտատտի գործի քննութիւնը մօտ է. քննութիւնից յետոյ յանցաւորները ենթարկվելու են պատերազմական-դաշտային դատարանի։—Այսօր Կօրէեվի նախագահութեամբ լեհական գործերի առիթով կայացած ժողովում երկու լեհ հրապարակախօս զեկուցում են կարդալու։—Վիտէն չի ընդունում ոչ մի միջնորդութիւն զանազան պետական [գործերի [վերաբերմամբ, յայտնելով, որ Կայսրն արդէն ընտրել է մինիստրներ և բոլոր խնդիրներն այսուհետև պէտք է ուղղել նրանց»։

—

Անիի պեղումները ընդարձակելու համար ստացանք Ենոք Մէլիք-Յարութիւնեանից (Բագու) 5 բուբ.։ Ընդամենը, նախկին ստացածների հետ միասին 523 բ. 35 կ.։

—

Նախիջևանի, աղէտի զոհերի օգտին ստացանք 1) Եղբ. Մանասերեաններից (Սալմաստեցի) 40 բուբ., 2) Ենոք Մէլիք-Յարութիւնեանից (Բագու) 25 բուբլի 3) Սողոմոն Սուլէյմանեանից (Անդիժան) 10 բուբլի, 4) տիկ. Զարուհի Գասպարեանից 2 բուբ.։

—

Բագուի աղէտից ֆնասվածների օգտին ստացանք 1) Թէհրանի հայ մի որոշ հասարակութիւնից Սկրտիչ Սրբեանի ձեռքով հաւաքած 53 բ., 2) Սալմաստեցի, Եղբ. Մանասերեաններից 40 բ., 3) տիկ. Զ. Գասպարեանից 2 բ.։ Ընդհանուր գումարը, նախկին ստացածների հետ միասին 30669 բուբ. 37 կոպ.։

—

Նոյեմբերի 3-ին թիւրքահպատակ Դաւիդ Իսուֆ Եալի անունով անձը յայտնեց Թիֆլիսի 7-դ քաղաքամասի պրիստաւին, որ, եկած լինելով Թիֆլիս ապրանք գնելու, նոյեմբերի 3-ին երեկոյեան ժամը 6-ին ինքն անցնում էր Կախէթեան փողոցով։ Զօրքերի զօրանոցին դեռ չը հասած, 5 զինուոր, խուզարկութեան պատրուակով, պաշարել են նրան և խլել նրանից ապրանքի համար բերած իր 390 բ. գումարը։ Այդ զինուորներից մէկի նշանները նա առել է։ Ձեռք են առնված յանցաւորներին ձերբակալելու միջոցներ։

—

«Իվերիա» լրագիրը հաղորդում է, որ մի խումբ վրացիներ մտադիր են Թիֆլիսում հիմնել յատուկ վրացական ժողովարան։

—

Այսօր, նոյեմբերի 5-ին, առաւօտեան ժամը 11-ին Թիֆլիսի Առևտրական դպրոցում կայանալու է աշակերտական միտինգ։

—

Հոկտեմբեր 26-ին, ասում է «Ցնօբիս-Փուրցելին», գիշերվայ ժամը 2-ին Կօջօրից Մանգլիս գնալիս 15 սայլապան վրացիների վրա յարձակվեցին այն զինուորները, որոնք Մանգլիսից գնում էին Գուրիա «ապստամբութիւնը» զսպելու։ Զինուորները յարձակվում են սայլապանների վրա, բղաւելով. «Դուք,—ապստամբներ. ձեզ բոլորիդ պէտք է կոտորել. ձեզ համար մեզ տանջում են»։ Բոլոր սայլապանները կողոպտել են, իսկ մեծ մասին ասպիսակ ծեծել են։

—

Տեղի են ունենալու հետևեալ միտինգները. Այսօր, նոյեմբերի 5-ին III արական գիմնազիայի բարձր դասարանների աշակերտները և ուսուցիչները միտինգ են կազմելու՝ քննութեան ենթարկելու համար մի քանի ընթացիկ հարցեր։—Կիլիկի, նոյեմբերի 6-ին Թիֆլիսի Նախալօվկա թաղում կայանալու է տեղական սոց.-դեմոկրատական կուսակցութեան միտինգը։

—

Վրաց լրագիրները հաղորդում են, որ Վրաստանի զանազան մասերում բազմաթիւ միտինգներ են կայացել հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հրատարակումից յետոյ։ Միւս կողմից հայկական նահանգներից մեզ լուրեր են ուղարկում, որ այն տեղերում էլ տեղի են ունեցել և դեռ տեղի են ունենում ժողովրդական միտինգներ, որոնց մէջ քննվում են համապետական, քաղաքացիական հարցեր։ Միայն ղժբաղդաբար հայ-թուրքական ընդհարումների ընավայրերը բոլորովին զրկված են ընդհանուր ազատագրական շարժման մասնակցելու մեծ ուրախութիւնից։

—

«Ցնօբիս Փուրցելի» ասելով, մինգրէլական զօրագնդից [դասալիք են եղել վերջերս 100 զինուոր, որոնց մինչև այժմ չեն կարողանում գտնել։

—

Ռուսական կայսրութեան պօստ-հեռագրական պաշտօնեաների դաշնակցութեան կենտրոնական բիւրօն խնդրել էր կոմս Վիտէին, որ պօստ-հեռագրական գլխաւոր դիրեկտօր Սեվաստիանօվը հեռացվի պաշտօնից, որովհետև նրա վերջին շրջաբերականը խեղդել, սպանել է ռուսական չինովնիկների մէջ երևան եկած բոլոր լաւագոյն ձգտումները։ Այդ բողոքող հեռագրին կոմս Վիտէն պատասխանել է, որ Սեվաստիանօվը չէ կարող պաշտօնից հրաժարեցվել, որովհետև նրա յայտնի շրջաբերականը, որով արգելում էր չինովնիկներին ընկերութիւններ ու դաշնակցութիւններ կազմել,—օրինական հիմքեր ունի և չինովնիկները պէտք է ենթարկվեն նրան։—Միւս կողմից՝ պօստ հեռագրատան պաշտօնեաների դաշնակցութեան գլխաւոր բիւրօն դէմ է նա և ներքին գործերի մինիստր Դուրնօվօին, նրա արած համանման կարգադրութեան և արտայայտած խորին արհամարհանքի համար դէպի պաշտօնեաները։ Այդ առիթով բիւրօն հրատարակել է նա և մի չափազանց կծու և միանգամայն արդարացի թռուցիկ պ. Դուրնօվօի դէմ։—Այժմ այդ դաշնակցութիւնը պահանջում է թէ Դուրնօվօի և թէ Սեվաստիանօվի հրաժարեցումը և, հակառակ դէպքում, սպառնում է լիակատար գործադուլ պօստի և հեռագրի, ժամանակակից կուլտուրական կեանքի այդ երկու ամենազօր գործոնների։ Թէ ինչ կը լինի այդ գործադուլի հետևանքը առևտրի, բօրսայի, զինուորական և այլ գործերի վրա—այնքան էլ հեշտ չէ զուշակելը։

—

ԴԷՐԲԷՆԴԻՑ, մեզ գրում են, հոկտեմբերի 15-ից «Դերբէնդ կայարանում երկաթուղային ժանդարմները խուզարկեցին երեք Թուրքերի, որոնց մօտ գտան մի քանի բերդանի և մաուզէրի ատրճանակներ և հրացաններ, նոյնպէս էլ 1300 փամփուշտ։ Ժանդարմների հարցին, թէ ուր են գնում նրանք, Թուրքերը պատասխանեցին, որ նրանցից մէկը գնում է Եւլախ, իսկ երկուսը Չինաչայ»։

—

ՏԻՖՕՐԷՑԿԻ կայարանից, հոկտեմբերի 28-ից մեզ գրում են. «Լուր է տարածվել, որ իբր թէ շուտով պէտք է գան այստեղ աւազակային մեծ խմբեր սպանութիւններ և խառնակութիւններ առաջ բերելու։ Մեծ սարսափ է տիրում տեղիս հայերի վրա. բոլէ առ բոլէ սպասում են. բոլոր հայերը տասը տուն են, իսկ տասնհինգ հոգի կենում են կայարանի III-րդ կասսի բուֆէտում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

—

Թէհրան, հոկտեմբերի 8-ին

Նախորդ նամակներով «Մշակ»-ին արդէն հաղորդել էի, թէ առհասարակ ինչպէս է տրամադրված ներկայումս Աստարայի, Լէնքորանի, Արդաբիլի, Էնզէլի և Ռաշտ քաղաքների պարսիկ ազգաբնակութիւնը հայերի դէմ Թուրք-հայկական կոտորածների վերաբերմամբ։ Ամեն անգամ էլ ես կրկնել էի, որ պարսից կառավարութիւնը ոչ մի տեսակէտից իր տրամադրութիւնը գրեթէ չէ փոխել հայերի նկատմամբ, այլ ընդհակառակը, ինչպէս մենք մօտիկից ծանօթացանք գործի իսկական դրութեան հետ, խիստ միջոցների է դիմել և ամեն տեղ պատուէրներ է ուղարկել, որպէս զի կառավարչական անձինք աշխատեն այն բոլոր թիւրիմացութիւնների առաջն առնել, որոնք կարող են Պարսկաստանի պարսիկ ու հայ ազգաբնակութեան մէջ կովկասանման անխախանձելի բարդութիւններ առաջ բերել։ Հաւաստի աղբիւրից ձեռք բերած տեղեկութիւնները նոյնպէս հաստատում են, որ Թէհրանի կենտրօնական իշխանութիւնը Իրանի Վեհապետի պատուէրով այդ խնդրի նկատմամբ նոյն իսկ առանձին բանակցութեան մէջ է մտել պարսից ազդեցիկ հոգևորականութեան գլխաւոր ներկայացուցիչների հետ, որպէս զի վերջիններս, իբրև մասսայի վրա խոշոր ազդեցութիւն ունեցող անհատներ, աշխատեն հարթել ամեն տեսակ անհաղորդակցութիւն, որ կարող է ծագել երկու ազգերի մէջ Կովկասի տխուր մահմեդական հերոսների այստեղ կազմակերպած պրօպագանդայի շնորհիւ։

Այժմ կարելի է հաստատուն կերպով պնդել, որ պարսից կառավարութեան համար ներկայումս ամենացանկալի բանը քաղաքական խաղաղութիւնն է երկրի ներսում, օտարամուտ քաղաքական ազդեցութիւններից ազատ մնալու համար։ Հէնց գլխաւորապէս այդ տեսակէտից էլ նա չէ ցանկանում ոչ մի խլրտումն իր հպատակ ազգութիւնների մէջ, որովհետև շատ լաւ գիտակցում է, որ համիսլամական շարժումը կարող է քաղաքական ֆլասներ պատճառել Պարսկաստանին։

Ինչ վերաբերում է Թուրք-հայկական կոտորածների վերաբերմամբ պարսից մամուլի բռնած ուղղութեան, պէտք է ասել, որ այդ մամուլը վերոյիշեալ տեսակէտից երկու միմեանցից տարբեր կատեգորիաների է բաժանվում։ Իսկական կամ բուն Պարսկաստանում հրատարակվող պարբերական թերթերը մեծ մասամբ արտայայտում են կառավարութեան կարծիքը այդ խնդրի վերաբերմամբ, աւելի անաչառ կերպով են դատում կոտորածները. օրինակ պաշտօնական «Իրան», և «Էթթէլա» շաբաթաթերթերը և «Թարբիաթ», «Սօրէա» ու «Աղար» պարբերական հրատարակութիւնները, որոնք մեծ մասամբ լոյս են տեսնում Թէհրանում, այն ինչ պարսկական արտասահմանեան թերթերը, օր. Ալէքսանդրիայի «Զեհրե-Նումա» և Կալկաթայի «Հաբլ-Ի-Մաթին» երկշաբաթաթերթերը համիսլամականութեան բուն պարսկական ներկայացուցիչներն են։ Դրանք շարունակ ազգայնական անհամբերասարութիւն են քարոզում և պարսիկներին գրգռում են ոչ միայն պարսկահպատակ հայերի, այլ և ընդհանրապէս Պարսկաստանում ապրող բոլոր քրիստոնեաների դէմ։

Անաչառութիւնը ստիպում է մեզ այստեղ խոստովանելու, որ թէև Կալկաթայի թերթը համիսլամական գաղափարի արտայայտիչն է, բայց և մի և նոյն ժամանակ նա ընդհանրապէս պարսկերէն լեզուով լոյս տեսնող միակ լուրջ և ազատամիտ հրատարակութիւնն է, որ աշխատում է լիբերալ գաղափարները մատչելի դարձնել պարսիկներին։ Ինչ վերաբերում է նրա, քրիստոնեաների նկատմամբ գրած կրքոտ յօդուածներին, պէտք է խոստովանենք, որ դրանց մեծ մասը այս կամ այն պատահական և մի և նոյն ժամանակ բախտախնդիր գրչակների մտքի հիւանդոտ արտադրութիւններն են, որոնց շատ անգամ տեղ է տալիս համիսլամական շաբաթաթերթը։

Նա շատ անգամ է քարոզել, որ մահմեդական կանայք պէտք է երեսները բաց անեն, շփվեն տղամարդկանց հետ և զուրանից բազմաթիւ օրինակներ է բերում, որ Մահմեդի օրերով հէնց այդպէս է եղել։ Նա քարոզում է, որ մահմեդականները ժամանակակից կուլտուրական պահանջների համեմատ պէտք է կրթութիւն ստանան, նոր սիստեմի դպրոցներ հիմնեն, Պարսկաստանի գործարանների թիւը բազմապատկեն, որպէս զի հնարաւորութիւն ունենան երկրի հում նիւթերը մշակել և շահագործել և այլն։

Բացի դրանից «Հաբ-Ի-Մաթին»-ը Պարսկաստանի ֆինանսական ներկայ դրութիւնը իր ուսումնասիրութեան ենթարկելուց յետոյ, պարսիկ ուխտաւորներին խրատում է այսուհետև ուխտ գնալ ոչ թէ արտասահմանեան Մեկկա և Քեարբալա քաղաքները, այլ բուն պարսկական Մեշեդ և Ղում ուխտատեղիները և այդպիսով տնտեսած գումարները յատկացնել բարեգործական նպատակների։ Հէնց այդ գաղափարների համար էլ Պարսկաստանի նախկին սադրազամը այդ թերթի մուտքը արգելել էր Պարսկաստան, որ վերացվեց միմիայն ներկայ Աթաբէգ Էյնուլ-Դովլէի օրով։

Բոլորովին անհիմն ու անարդար կերպով հայերին համարելով կոտորածների սկզբնապատճառը, վերոյիշեալ շաբաթաթերթը հայերին շարունակ զգուշացնում է Պարսկաստանում հանդիստ կեանք վարելու։

Մի և նոյն բանը նրա խմբագիրը կրկնել է սրանից մի ամիս առաջ Կալկաթայի պարսից դեսպանատանը Շահի տօնի առիթով կազմակերպված հանդիսի ժամանակ, ուղղելով իր խօսքերը այդ հանդիսին ներկայ գտնվող հայերի հոգևոր ներկայացուցիչ Յակոբ քահանային, որ նրան պատասխանելով՝ ամենայն իրաւունքով պնդել է, որ մինչև այժմ հայերի և պարսիկների յարաբերութիւնը բարեկամական և նախանձելի է եղել, որը և կը լինի ապագայում։

Պարսից երկրորդ համիսլամական օրգանը Ալէքսանդրիայում հրատարակվող «Զեհրե-Նումա» պատկերազարդ երկշաբաթաթերթն է, որ Թուրք-հայկական կորստաբեր ընդհարումների ամբողջ մեղքը կուրօրէն գցում է հայերի վրա, ասելով, որ նրանք բելգիացիների հետ միասին Պարսկաստանի ամենավտանգաւոր թշնամիներն են և կառավարութեան նը-

բանց շնորհած արտօնութիւնները ի չարն են գործադրում։ Պարսկաստանում բաւականաչափ բաժանորդներ ունեցող այդ երկշաբաթաթերթի ուղղութեան մասին գաղափար տալու համար, այստեղ բերում ենք նրա էջերում սրանից քիչ առաջ լոյս տեսած մի յօդուածի թարգմանութիւնը, որ հետևեալն է։

«Շարունակ կրկնել և այժմ էլ կրկնում ենք, որ Պարսկաստանում խոր արմատներ է գցել մի հին հիւանդութիւն, որ մահմեդական կրօնի և նրա ուղղութեան ամենավտանգաւոր և թունալից թշնամին է։ Այդ հիւանդութիւնը կորստաբեր է շարիաթի և իսլամութեան համար, մահմեդական հաւատի յափշտակիչն է, ազգութեան կողոպտիչը և մահմեդական երկիրների նամուսը քամուն տուողը։ Այդ հիւանդութիւնը առաջ է գալիս երեք բանից՝ քահանայից, դեսպանից և թնդանօթից։ Քահանան (մեծ մասամբ միսիօնարի մասին է խօսքը) պարսից կառավարութեան, ազգի և երկրի ամենամեծ և զօրեղ թշնամին է, որից վատ ապագայ է գուշակվում... Դրան ընդունել նշանակում է մեր ոտքով դէպի իժը վազել։ Ճիշդ է ասել անգլիական սագրազամը (?), որ օտար երկիրներ ձեռք բերելը կախված է քահանայից, դեսպանից և թնդանօթից։ Ուրմիայում սպանված քահանայի արեան գինը տակաւին չէ վճարված։ Պէտք է աշխատել որ և է վտանգի առաջը նախօրօք առնել։ Դրա իսկական դեղը այն է, որ կառավարութիւնը քահանաներին այլ ևս առանձնաշնորհումներ չը տայ և այսուհետև հայերին այլ ևս չընդունի կառավարչական պաշտօնների համար, որովհետև շատ ճիշդ է այն առածը, որ ասում է. «բարակ առուակի կամ աղբիւրի առաջը կարելի է բոնով կապել, բայց երբ նրա ջուրը յորդացաւ, նոյն իսկ փղով չէ կարելի կապել»։

«Իրան» և «Էթթէլա» շաբաթաթերթերը Թուրք-հայկական կոտորածների համար միմիայն հեռագրական տեղեկութիւններ են հաղորդում, չը նայելով որ դրանք էլ վերջերս զոհ գնալով արտասահմանեան մի թղթակցի, տպեցին իրանց էջերում այն զրպարտութիւնը, իբր թէ հայերը (Թումանեան եղբայրները, Լիանոզովները և այլն) այժմ սկսել են զէնք մտցնել Պարսկաստան. բայց բարեբաղդաբար այս անհիմն տեղեկութիւնը նորերս պաշտօնապէս հերքեց Մուշիր-Դովլէն, Թումանեանների տեղիս ներկայացուցիչ Ալէքսան-խան Թումանեանի միջնորդութեամբ։

«Թարբիաթ» շաբաթաթերթը նպաստաւոր կարծիք է յայտնում հայերի մասին։ Նրա խմբագիր Զօքահալ-Մուլքը, որ յայտնի բանաստեղծ է և մի և նոյն ժամանակ արտաքին գործերի մինիստրութեան Թէհրանում հիմնած պարսից նշանաւոր դպրոցի տեսուչն է, իր մի առաջնորդողում ասում է, որ Թուրք-հայկական կոտորածի համար ոչ ոք մեղաւոր չէ, բացի այն արտաքին զօրեղ թշնամուց, որ շարունակ գրգռում է այդ երկու ազգերին։ Դրա համար էլ խմբագիրը բարեկամական յորդորներ է կարդում։

Սեպտեմբերի 23-ին մայրաքաղաքս ժամանեց Իրանի վեհապետ Մուզաֆէր-Էդդին Շահը։ Այդ օրը մայրաքաղաքումս անսովոր կենդանութիւն և ոգևորութիւն էր տիրում։ Այն փողոցները, որտեղով պէտք է անցնէր թագաւորական գնացքը, զարդարված էին թանգագին գորգերով և կամարներով։ Թէհրանի մօտ 400 տնից բաղկացած հայ գաղութը նախօրօք պատրաստվել էր իր մարդասէր Վեհապետին արժանավայել կերպով ընդունելու։ 12 հոգուց բաղկացած հայ պատգամաւորութիւնը, իր գլուխ ունենալով Համադանի առաջնորդական փոխանորդին և տեղիս գործակալ քահանային, Մեհրապատ վերջին կայարանում աղ ու հաց և մի ուղերձ է ներկայացրել Պարսկաստանի Վեհին, որ բարեհաճել էր սիրով ընդունելու։ Ահա և այդ ուղերձի թարգմանութիւնը.

«Ամբողջ Պարսկաստանի ընդհանրապէս և Թէհրանի հայ հպատակներս մասնաւորապէս, որ ձերդ կայսերական մեծութեան հովանաւորութեան ներքոյ հանգստութիւն և երջանկութիւն ենք վայելում, երջանիկ ենք սրտանց շնորհաւորելու ձերդ արքայական վեհափառութեան բարձրագոյն ժամանումը և ամենախոնարհաբար աղերսելու, որ բարեհաճէք մեր անկեղծ աղօթքները ընդունելու։ Այս մեծ բարիքի (ժամանումը) առիթով Պարսկաստանի ամբողջ արքայապաշտ ժողովուրդը, մանաւանդ հայ հպատակներս, սոյն բարեբար բոպէին բիւր լեզուներով Նորին Վեհափառութեանդ երկարակեցութեան համար աղօթքներ ենք անում և Աստուծուց աղերսում, որ Նա այս թագաւորութեան և արդարութեան գահը իր նեցուկներով և սիւներով յաւիտեանս հաստատուն և անխախտ պահէ»։

Լ. Բարայեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

3 Նոյեմբեր

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 Նոյեմբերի։ Պաշտօնական։ Ի նկատի ունենալով, որ Մինիստրների Խորհրդի նախագահի անունով մեծ քանակութեամբ զանազան տեսակ միջնորդութիւններ են ստացվում, որոնք անմիջապէս վերաբերում են առանձին առեւտրների գործերին, ստատս-սեկրետար Վիտաէ անհրաժեշտ է համարում ուշադրութիւն դարձնել, որ վարչութեան առանձին մասերը միացնելու մասին Բարձրագոյն ուկազի մէջ օրէնքով իր վրա պարտաւորութիւն է դրվում միութիւն սահմանել մինիստրների գործունէութեան մէջ, այնպէս որ իւրաքանչիւր մինիստր պահպանում է կատարեալ անկախութիւն իրան յանձնած վարչութեան շրջանում, համապատասխան կառավարչական ձեռնարկութիւնների խորհրդի մէջ մասնացոյց արած ընդհանուր ուղղութեան։ Նորին Կայսերական Մեծութիւնը ներկայ ժամանակ բարեհաճել է ընտրել անձինք բոլոր մինիստրական պաշտօնեաները գրաւելու համար, և այդ պատճառով անմիջապէս առանձին առեւտրներին վերաբերվող յայտարարութիւնները և միջնորդութիւնները պէտք է ուղարկվեն մինիստրներին և գլխաւոր կառավարիչներին։

ԿԻԵՎ, 2 Նոյեմբերի։ Քննելու համար ջարդը և պարզելու պաշտօնական անձանց մասնակցութիւնը այդ ջարդին, այստեղ ուղարկվում է Մոսկվայի դատաստանական պալատի աւագ նախագահ Արնօլդ։

Կիեվo-պոլտավեան երկաթուղու Գրէբէնկայ կայարանում բէլսերից գուրս եկաւ զինուորական գնացքը։ Առևտրական բանկերի ներկայացուցիչների խորհրդակցութիւնը որոշել է միջնորդել բանկերի վարչութիւնների առաջ՝ արտօնել կրէդիտ տալ ջարդի ժամանակ վնասված առևտրականներին և արդիւնաբերողներին։

ՍԱՐԱՏՕՎ, 2 Նոյեմբերի։ Վաղը սպասվում է գեներալ-ադիւտանտ Սախարովը։ Քաղաքում կազմակերպվում են սահմանադրական-դէմօկրատական և իրաւական կարգի կուսակցութիւններ։

ՐՕՄՆԻ, 2 Նոյեմբերի։ Ջարդի ժամանակ վնասված առևտրականներին օգնելու և առևտրական ու արդիւնաբերական կեանքը վերականգնելու համար վճռվեց խնդրել կառավարութիւնից երկարատև փոխառութիւն։—Ընտրված է հիգանդամեայ կոմիտէտ պաշտպանութիւնը կազմակերպելու համար։

ՎԻԼՆԱ, 2 Նոյեմբերի։ Քաղաքում հանգիստ է։ Տեղի ունեն աննշան միջադէպքեր գիշերները, որոնք ստիպում են հրէաներին ինքնապաշտպանութեան դիմել՝ հրացանաձգութիւն սկսելով օդի մէջ։

ԼՕՆԴՕՆ, 2 Նոյեմբերի։ Պետերբուրգում գործադուլներ սկսվելու մասին հեռագիրները այստեղ վհատեցուցիչ տպաւորութիւն գործեցին։ Ծայրայեղ ազատամիտների միամիտ, անհամբերող և անգործնական պահանջները զրկեցին նրանց վերջին անգլիական աջակցութիւնից։ Այստեղ այն կարծիքի են, որ նրանք թշնամիների կոյր գործիք են դարձել, պահելով երկիրը անհանգստութեան և յուզման մէջ, որոնց ժամանակ անհնար է բէֆօրմներ մտցնելը։ «Վեստմինստր Գազետ» լրագիրն ասում է, օրէց օր աւելի դժուարանում է ճգնաժամը բարեյաջող լուծելու յոյսը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 Նոյեմբերի։ Տամբովի նահանգում կարգը վերահաստատելու համար ուղարկված է գեներալ-ադիւտանտ Ատրակօվ։—Որ և է հիմքից զուրկ է ծովային մինիստր Բիրիլէվի առաջիկայ հրաժարականի լուրը։ Նոցա Մեծութիւնները ամարային բէզիդէնցիայից տեղափոխվեցին Ցարսկօ-Սելօ։

Գործադուլ արեցին Պետերբուրգի գործատների մեծ մասը և դրանց թւում նաւաշինային և Պուտիլովեան գործարանները։ Գործադուլ սկսվեց վարշավեան և բալտեան երկաթուղիների վրա։ 32,000 աւելի է գործադուլ արած բանուորների թիւը Պետերբուրգում։ Տպարանները գործադուլ են անում։ Վաղը լրագիրներ չեն հրատարակվի։ Քաղաքը հանդիստ է։ Մետալական և մետալուրգիական արդիւնաբերութեան ներկայացուցիչների խորհրդակցութիւնը կարծիք յայտնեց ութ ժամեայ բանուորական օր մտցնելու դէմ և կազմեց կոչ դէպի բանուորները։ առաջարկելով հրաժարվել. հակառակ դէպքում արդիւնաբերողները կամենում են գործարանները փակել։ Մոսկվան այսօր փոխադրեց մի քանի զէմստվոներին 550,00 ր. ուտեստի օգնութեան համար։

ՕԴԷՍՍԱ, 2 Նոյեմբերի։ Քաղաքապետը կարգադրեց քննութիւն կատարել ոստիկանութեան գործունէութեան մասին հոկտեմբերեան ջարդերի ժամանակ։ Քաղաքային վարչութիւնը մատդրութիւն ունի հրաժարականատալ, որպէս զի զսման կարողանայ ժամանակի ոգուն և հասարակական պահանջներին համատատասխան նոր կազմ ընտրել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 հոկտեմբերի։ «Русь» լրագիրը հաղորդում է առևտրի նոր մինիստր Տիմիրեազեվի հետ խօսակցութիւնը։ «Ինձ վրա դրված է պարտաւորութիւն, ասեց նա, բարձրել երկրի բանուորների դրութիւնը։ Այդ խնդիրը լուծելու համար պէտք է օգնութեան գան հասարակութիւնը և իրանք բանուորները։ Այն ինչ սոցիալ-դէմօկրատական կուսակցութիւնը, որ զեկավարում է բանուորական շարժում, իր համար նպատակ է դրել ամեն ինչ քարուքանդ անել և արմատահան անել երկրի բարօրութիւնը։ Իր տակտիկան առաջ տանելու համար նա հետևում է նեղ կուսակցական և ոչ թէ ընդհանուր պետական նպատակներին, հրաժարվելով խաղաղ ստեղծագործող աշխատանքից և այդ ճանապարհով տանելով բանուորներին։ Իսկոյն ութժամեայ բանուորական օր մտցնելու հետևանքը այն կը լինի, որ կը փակվեն գործատները և գործարանները և բանուորները կընկնեն յուսահատ աղքատութեան և սովի ճանկերը։ Այդ պատճառով բանուորները պարտաւոր են սպասել իրանց ծայրայեղ պահանջներով մինչև ժողովրդական ներկայացուցիչների գումարելը։ Այժմ կառավարութիւնը իրաւունք չունի առանց նրանց օրէնքներ հրատարակել բանուորական օրվայ տևողութեան մասին։ Պետական Դուման կը վճռէ այդ հարցը։

Նաւագնացութեան ընկերութիւնը մատուցանում է ամենահպատակ զեկուցում իրաւական կարգ շնորհելու համար, և նոյնպէս ուղերձ է մատուցանում Վիտտէին այն համոզմունքը յայտնելով, որ նա անձնուիրութեամբ կը կատարէ նոր Ռուսաստանի պետական շինարարութեան իր յանձն առած աշխատանքը։

ՄՕՍԿՎԱ, 2 Նոյեմբերի։ Քաղաքապետը յայտնում է այսօր, որ մի քանի դպրոցներ սկսում են իրանց սովորական զբաղմունքները, ապա կը հետևեն ուրիշները։ Աշակերտների ծնողներին հանգստացնելու համար յայտարարում եմ, որ կը կարգադրեմ պաշտպանել աշակերտներին որ և է պատահակութիւններից։ Զարմիտ յերիւրանքներ են այն լուրերը, որ իբր թէ ոստիկանական պաշտօնեաները գրգռում են ամբոխը ուսանողների դէմ, նոյնպէս և այն հաղորդագրութիւնը, թէ ոստիկանութեան պաշտօնեաներն են կազմակերպել սև հարիւրեակներ հրէական ջարդերի համար։ Մերկացրված բամբասողները դատաստանական պատասխանատուութեան կը կանչվեն։

ԿԱԶԱՆ, 2 Նոյեմբերի։ Մասնաւոր տպարանների գրաշարների գործադուլը շարունակվում է։ Տէրերի հետ համաձայնութիւնը չը կայացաւ։ Տասն և վեցերորդ օրն է, որ լրագիրներ լոյս չեն տեսնում։ Խմբագիրները և գրաշարները վճռեցին հեռագիրներ լոյս ընծայել։

ՄԻՆՍԿ։ Բանուորները կազմակերպվում են պաշտպանութեան խմբեր հրէական ջարդերի դէպքի համար։

ՎԱՐՇԱՎԱ, 2 Նոյեմբերի։ Ծառայողների միտինգը որոշեց երկրի շահերի տեսակէտից առժամանակ դադարեցնել երկաթուղային գործադուլը։ Կոմս Վշաղիսլավ Տըշկէվիչը, Ստանիսլավ Լիբինսկին և Էդուարդ Եանցէնը աքսորված են։

ՊԼՕՑԿ, 2 Նոյեմբերի։ Ջարդերի մասին տարածված լուրերը անհիմն երևացին։ Բոլորը հանգիստ է։ Ուտելէղէնները թանգանում են։ Կրթական հաստատութիւնների մէջ, որոնց պաշտպանում է զօրքը—զբաղմունքը սովորականի պէս առաջ է գնում։ «Արձագանք» (Эхо) լրագիրը լոյս տեսաւ ցէնցուրայով։

ԼԻԲԱՎԱ, 2 Նոյեմբերի։ Երկէ ոստիկանական պասպօրտիստ Կլուգէն, հիւրանոցում հարբելով, սկսեց փող բաժանել, առաջարկելով ջարդել հրէաներին։ Եկող անյայտ անձինք Կլուգէի գլխին պարկ անցկացնելով՝ կառքով տարան նրան Բէկկէրի պատուակային գործարանը, որտեղ տեղի ունեցաւ դատ։ Մահվան դատապարտված Կլուգէնը սպանվեց երկու գնդակի հարուածով։ Կատարվում է քննութիւն։

ՊԱՐԻԶ, 2 Նոյեմբերի։ Պարլամենտը ընդունեց կրեդիտ Խրիստոնիայում դեսպանութիւն հաստատելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 Նոյեմբերի։ Բարձրագոյն արձակվում են Եւրօպական Ռուսաստանի զօրքից իբրև պահեստներ՝ 1891 և 1892 թթ. ծառայող զինուորները։ Բացի դրանից, երկրի զինուորական վարչութիւնը սկսել է նախապատրաստական աշխատանքներ՝ արձակելու 1893, 1894, 1895, 1896 թթ. պահեստի զինուորներից ծառայութիւն կոչածներին։ Սիբիրեան զինուորական շրջանում արձակվում են 1887, 1888, 1889, 1890 թ. թ. զինուորները։ Մնացած ժամանակների զինուորների արձակումը տեղի կունենայ Հեռաւոր Արևելքից զօրքի վերադարձման չափով, որ կախված է երկաթուղային կանոնաւորութիւնից։

ՎԱՐՇԱՎԱ, 2 Նոյեմբերի։ Բանկատէրերի և վաճառականների ժողովը որոշեց բաց անել վաղը բոլոր բանկերն ու խանութները։

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ, 3 Նոյեմբերի։ Նահանգապետի պաշտօնը վարող Սարիժէվսկիու յայտարարութեամբ զօրքով կը ցրվի ամեն մի փողոցային ցոյց։

ՄՕՐՇԱՆԱԿ, 3 Նոյեմբերի։ Գաւառում ագրարային անկարգութիւններ են։

ՇԷՐԲՈՒՐԳ, 3 Նոյեմբերի։ Արսենալի բանուորները որոշեցին վերսկսել աշխատանքները։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 3 Նոյեմբերի։ Ֆինլանդիայի բոլոր պաշտօնական մարդկանց, որոնք արձակվել են իրանց պաշտօններից վերջին տարիներս հակասահմանադրական կարգով,—Բարձրագոյն նշանակված է կենսաթոշակ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 Նոյեմբ։ Մինիստրների ժողովի նախագահ կոմս Վիտտէն՝ գործարանների, զավօդների ու տպարանների գործադուլ անող բանուորներին ուղարկեց հետևեալ հեռագիրը։ «բանուոր եղբայրներ, աշխատանքի կացէք, թողէք խռովութիւնը, խղճացէք ձեր կանանց և որդոց, մի լսէք վատ խորհուրդներին։ Կայսրը հրամայել է մեզ առանձին ուշադրութիւն դարձնել բանուորական հարցի վրա։ Այդ նպատակով Նորին Մեծութիւնը կազմակերպեց առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութիւն, որը պէտք է որոշէ բանուորների ու նախաձեռնողների արդար յարաբերութիւնները։ Ժամանակ տուէք—բոլոր կարելին կանվի ձեզ համար. լսեցէք ձեզ համամիտ և ձեզ բարիք ցանկացող մարդու խորհուրդը. կոմս Վիտտէ»։

Վիտտէն ընդունեց Նովօրօսիական համալսարանի պատգամաւորութիւնը, բաղկացած Լանդ էր, «Վէրեգէ և Շէչեկին պրոֆէսորներից։ Վէրեգոյի խօսքերի համաձայն, Վիտտէն ցաւակցութիւն յայտնեց Օդէսսա քաղաքի դրութեան համար և խոստացաւ սենատորական քննութիւն։ Կուղարկվեն Կուզմինսկին կամ Մէչչանինովը։

Բերլին, 3 Նոյեմբերի։ Արտասահմանեան լրագիրները շարունակում են պնդել թէ այն դիրքը, որ բռնել է Վիտտէն լեհական անկախութեան հարցում, պայմանաւորվում է Գերմանիայի ազդեցութեամբ և գերմանական կառավարութիւնը պատրաստվում է իր զօրքերը մուծել Ռուսաց Լեհաստան։ Վստահելի աղբիւրից յայտարարում են, որ այդ լուրերը—զուտ ցնորքներ են։

ԿՈՒՐՍԿ, 3 Նոյեմբ. Կուրսկի նահանգապետը յայտարարում է, որ թոյլ չի տայ կազմել ժողովներ՝ առանց բացառութեան, մինչև որ տեղական կեանքը բոլորովին չը հանգստանայ։ Բոլոր այն գործողութիւնները, որոնք կը խափանեն այս հրամանը, կը հալածվեն օրէնքների բոլոր միջոցներով։

ԽՐԻՍՏԱՆԻԱ, 3 Նոյեմբերի։ Ենթադրում են, որ ստօրտինգը պատգամաւորութիւն կուղարկէ ուրբաթ կամ շաբաթ Դանիական պրինց Կալրի մօտ՝ Կոպէնհագէն, զինուորական նաւի վրա։ Ստօրտինգը քննում է ապագայ թագաւորին պահպանելու ծախքը։ Ուրբաթ կառավարութիւնը ստօրտինգին առաջարկութիւն կանէ թագաւոր ընտրելու։ Լրագրների ասելով, նոր արքան Կարլոս անունը կը կրէ։ Դրօշակը կը կազմվի ոսկէ առիւծից կարմիր դաշտի վրա։

ՍՈՒԴԻԱ, 3 Նոյեմբերի։ Մօտ 813 տանտէր գիւղացիներ ներկայացան զէմստվային վար-

չութեան՝ Պետական Դումային ընտրվածներին յանձնելու համար իրանց որոշումները, գիւղացիների իրաւունքները միւս դասակարգերի հետ հաւասարացնելու, կամ տային հարկ մացնելու և գիւղական հողատիրութիւնը լայնացնելու մասին։

ՄՕՍԿՎԱ, 3 նոյեմբերի։ Գենեռալ-նահանգապետը յայտնեց բնակիչների մի խմբի, թէ կազակները չեն հեռացվի Մոսկվայից, մինչև որ չի լինի օրինական կարգ և խաղաղ հանգըստութիւն։

ՈՒՄԱՆ, 3 նոյեմբերի։ Ագրարային շարժումը մեծանում է։

ՄՕՍԿՎԱ, 3 նոյեմբերի։ Երկաթուղային ծառայողները Պետերբուրգից առաջարկութիւն ստացան գործադուլ անել։ Մեծամասնութիւնը ասում է, որ Լեհաստանում եղած զինուորական դրութեան պատճառով, գործադուլ չի անիլ։

ՀԻՆ-ՍՈՒՕՀ, 3 նոյեմբերի։ Երեք կալուածատիրական հողեր աւերված են, անասունները մորթոտած, ձիերը տարած, շինութիւնները այրված։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական ժամճակալներով։
Ելիզավէտինսկայա փողոց, 101, տէլէֆոն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։

Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 11—12 ժ.—միզասեռական, լաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղա ին, ներքին հ. և ելեքտրո-բուժութիւն։
Պ. Ն. ԴԷՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Պ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼԶԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի հ.
Պ. Ա. ԲԷՑԷՐ—երեխայոց և ներքին հ.

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում ելեկտրօսկոպիական, բակտերիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և սանտունների (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Դիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմէրներից։
(չ.ու.կ.) 15—100

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
ԶԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Զ. Ի. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վենէրակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. ԿԶՐԱՑԵՏՑԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԶՆՐԲԻՆԻՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Յ. ԳՈՒՐԴԵԼՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5 6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.։
Ե. Գ ԱԲԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Պ. Ա. ԱՐԴԱԶԻԱՆԻ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիոլոգիական հետազօտութիւններ։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՄ ԽԱՆՈՒԹՍ,
աղամարդկանց պատրաստի շորերով, ճերմակեղէններով, մանուֆակտուրային ապրանքներով, գումարը մօտ 3000 ռուբլու, խանութը գտնվում է Թիֆլիսի ամենալաւ առևտրի կենտրոնում, և յարմար ամեն տեսակ առևտրի, պայմանների մասին դիմել Գրիգոր Թառայեանի զգեստի խանութ, Ալէքսանդրեան այգու դիմաց, տուն Մարտիրոսեանի։
(կ) 1—2

ԲԺԻՇԿ

Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վենէրական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կաղեռսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կաղեռսկի փողոցից № 2.
(ա. օ.) 48—300

ԲԺԻՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատոր Մոսկվայի համալսարանի կլինիկայի

Վերսկսեց ընդունելութիւնը յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան։ Բարշչևսկի փող. № 1, «պօժարնի կոմանդի» դիմացը. տէլէֆոն № 11.
(ա. օ.) 15—20

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԳԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միքայել Գեղեվանօվի

Զղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը
Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տէլէֆոն № 791։ (ա. օ.) 21—150

ԲԺԻՇԿ

Լեւոն Քամոյեան
Վերադարձաւ Կովկասեան Հանքային Ջրերից և վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։ Միզանցաասեռական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւններ։ Առաւօտեան 9—12 ժամ, երեկոյեան 3—8 ժամ։ Միքայէլեան փողոց, № 55։ (ա.օ յ. օր.մ.) 27—30

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. Քարանեան
Ընդունում է ներքին և զղային հիւանդութիւն ունեցողներին առաւօտեան 9—11 ժ.։ Երեկոյեան 5—7 Վելիամինօվսկայա փողոց, տ. Սաֆարովի, № 13. տելեֆոն № 1061։ (շ. Ե. հ.) 15—20

ԲԺՇԿԱՊԵՏ

Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։ 16—20

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8։ (Ե.ռ.)25—100

Պահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲԻՆ»
Միայն Միխայիլ Լեբեդեվի
„Этикетъ утвержденъ прав." մակագրութիւնով



Այս մէջքը մի քանի օրում բարձրանում է ինչպէս պակաս
Ամենի ամենաշատ ուտող մարդու մէջքի չափ։

Գլխաւոր պահեստատեղին զեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։
10, 20, 30 30—36

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Կայսերական թատրոնների արտիստ Լ. Դօնսկոյի անտարբերիզ
Այսօր, շաբաթ, նոյեմբերի 5-ին
«Գալա» ներկայացում «ԶԱԶԱ» լիրիքական կոմէդիա 4 գործ. բառերը և մուզիկան Ր. Լէօնկավալլօի թարգ. Ա. Գօրչակովայի։ Բովանդակութիւնը փոխ է առնված Բէրտօնի և Սիմօնի կոմէդիայից
I գործողութիւն
«Կաֆէ-Շանտանի, կուլիսների ետևը»
II գործ. «Զազայի տանը»
III գործ. «Դիւքէնի»
IV «Զազայի մօտ»
Մասնակցում են տ.տ. Դուբրովսկայա, Նիկիտինսկայա, Միլիցկայա, Ֆէրրարի, Կարպովա, օր. Պրէսման. պ.պ. Սօկոլսկիյ, Կարելին, Կոլոտով, Վոլսկիյ, Զիստիակով, Տոմաշевիչ, Դեմիանենկо, Շէյին, Դավիդով, Սուրտիս, Կանպիր։
Կապիտէյստէր Լ. Պ. Շտայնբէրգ
Գլխաւոր բէժիսսօր Ն. Ն. Բոգոլիւբով
Աշակերտական տոմսակները ծախվում են ամեն օր «Լօկասիօն»-ի կասսայում երեկոյեան 7¾ ժամից։
Տեղերի գները սովորական են։
Յայտարարութիւն. կիրակի, նոյեմբերի 5-ին առաւօտեան «ՐՈՒՍԱԼԿԱ» մուզ. Դօրոգոմիժսկու, երեկոյեան կը ներկայացվի Ռուսլան և Լիւդմիլա, մուզ. Գլինկայի։
Տոմսակները ծախվում են։

ՀՐԱՒԷՐ

Հալաբարի սբ. Էջմիածնի եկեղեցու հոգաբարձութիւնը յայտնում է ի գիտութիւն, որ վաղը, կիրակի, նոյեմբերի 6-ին վերաբացվում է նոյն եկեղեցու ծխական ուսումնարանը։
(շ.) 1—1

Ունեւեւալով ցեղդ ցանկանում եմ հայոց լեզուի մասնաւոր դասեր ունենալ հայ ընտանիքներում. ցանկացողները թող դիմեն Թիֆլիս Հալաբար Աբարատեան փող. № 15։ Տ. Անանմանուկեան։
1—3

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆ
Շաբաթ, նոյեմբերի 5-ին
Հայոց Դրամատիկական ընկերութեան խումբը կը ներկայացնէ Վ. Փափազեանի նոր պիէսան
ԺԱՅՌ
4 արարուածով
Մասնակցում են տ.տ. Արաքս-Զարիֆեան, Մայսուրեան, Մելիքեան, Վարդուհի. պ.պ. Ազեան, Աւետեան, Ադէլխանեան, Բերոյեան, Զարիֆեան, Թաշճեան, Միրաղեան, Յարութիւնեան, Պետրոսեան, Ատեփանեան, Առաքելեան և ուրիշները։
Սկիզբը ճիշդ ժամը 8-ին
Բեժիսսեօր Ս. Քափանակեան
(ու. շ.) 2—2

ՇՈՒՇԵՑԻ ԱՒԱԳ ՄԱՀՏԵՍԻ-ՅԱԿՈԳԲԵԱՆԸ, որը նորերս գաղթել է Շուշուց Թիֆլիս, թողել է Ելախ կայարանում իր որդի, տասերկուամեայ Քրիստափորին, որը գտնվում է այժմ Գանձակում, գանձակեցի Նիկոլայ Առաքելեանցի տանը (Նոր-փողոց, № 77)։ Փոքրիկ Քրիստափորը Ելախից մի պատահական գնացքով եկել է Գանձակ, որտեղ հարց ու փորձ անելով իր ծնողներին, պատահմամբ ընկել է պ. Նիկոլայ Առաքելեանցի խանութը. բարեսիրտ Առաքելեանը այժմ իր տանը խնամում է գաղթական մանուկին ու դիմում է նրա ծնողներին, որ գան և վերցնեն իրանց երեխային։ 2—3

ԱՆՊԱՏԵԼԻ ԱՐԱԳ ՄԵԿՆԵԼՈՒ
պատճառով, շատ էժան ծախվում են մի զոյգ ձի, մի միաձի կառք, ուրիշ կառքեր և նրանց պարագաների մի մասը։ Հասցէ—Միքայէլեան փող. № 200։ (ա.օ.) 2—5

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիսի, միզային, վենէրական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկեվիչա փողոց. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա.օ.) 12—100

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1906 թ.
„ՄՈՒՐՃ"
ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՄՍԱԳՐԻ
(Նոր շրջան VI տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստան եւ Պարսկաստան—տարեկան 10 ր., կէս տարին 6 ր., 1 ամսվան 1 ռուբլի։
Արտասահման—տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր., (18 ֆ.), 1 ամսվան 1 ր. 20 կ. (3½ ֆ.)։

Ծանօթութիւն. Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս. սկզբում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.—կամ սկզբում 5 ր. և յունիսի 1-ին 5 ռուբլի։ Հայոց դպր. վարժուհիների և ուսուցիչների, գիւղական քահանաների, միջն. ուս. աշակերտների և ուսանողների համար բաժանորդագինն է 8 ռուբլի Ռուսաստանում։ Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագինը (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանելով այնպէս, ինչպէս իրանց յարմար է։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց տ. № 12)։
Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել Тифлисъ, Въ редакцію журнала „Мурчъ". Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Murtch».
«Մուրճի» զորձակալներ.
Աստրախան—Գ. Ք. Մկրտումեան։
Բագու—բժ. Գ. Սարգսեան, (Б. Морск. д. № 26) և Յ. Քոչարեան։
Բիբի-Էյբաթ—պ. Դ. Տէր-Դանիէլեան։
Երևան—«Արարատ» գրախանութ.
Կարս—պ. Համազասպ Տ.-Խաչատրեան։
Մոսկվա—պ. Ստ. Թումեան.
Սօչի—պ. Արամ Յակոբեան (Սեծովեզերեայ շրջան)։
Սամարկանդ—Ռ. Ք. Բէկգիւլեան (Անդրկասպեան երկիր)։
Թիֆլիս—«Գուտտենբերգ» և «Կենտրոնական» գրավաճառ.
Վլադիկաւկազ—Յ. Ք. Սահիկեան (Հիւս. Կովկասի համար)։
Թաւրիզ—Բժ. պ. Յ. Տէր-Ստեփանեան և Հ. Պանիրեան։
Եղիպտոս—դոկտոր Կ. Փաշայեան-Խան (Ալէքսանդրիա)։
Էնզէլի—պ. Գ. Մէլիք-Աբրահամեան։
Նոր-Զուղա—պ. Տիգրան Աբգարեան։
Թէհրան—պ.պ. Ալէքսան Թունեանց և Լ. Բաբայեան։

1905 թուականի այն բաժանորդները, որոնք կը գրվեն մինչև այս տարվայ դեկտեմբերի 1-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը (10 ր.) միանուագ՝ կը ստանան, իբրև պրեմիա, պ. Առանձարի «ՎՇՏԻ ԾԻԾԱՂԸ»։ Նոր գրվող բաժանորդները այդ պրեմիայի փոխարէն, կարող են ստանալ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների «Մուրճ» ձրիաբար։ 1—5

ԳԷՊՕ
ԱՌԱՋԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„Եղբ. Յակոբջանեան եւ Սարգսեանց"

Պատրաստի հագուստեղէնի խանութում (Միքայէլեան կամուրջ, Քամոյեան տուն № 25—30) մշտական ստացվում են մեծ քանակութեամբ կանանց, տղամարդկանց և երեխաների համար ամենավերջի ամառվայ սեզոնի տարազով պատրաստած հագուստներ։
Գները չափաւոր են և առանց սակարկութեամբ։ (չ. հ.) 78—100

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ. Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. Ул. № 15.